Mon. Rédaction
de la Revue Arménienne HANTESS
au Couvent des R.R. P.P. Méchitharistes
à VIENNE
VII Méchitharistingasse

ՊԱԶՄԱՎԷՊ

ԿԻՍԱՄԱՍԵԱՅ

Ազգային, Գրական եւ Բազմագրական

27 ՐԴ ՏԱՐԻ

1897

ԹԻՒ 15 ՕԳՈՍՏՈՍ 1

ԽՄԲԱԳԻՐ - ՏՆՕՐԷՆ

Մ. ՄԱՄՈՒՐԵԱՆ

ՉՄԻՒՌՆԻԱ

ՏՊԱԳՐ. ՄԱՄՈՒՐԵԱՆ

ՊԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ

ՎԱՀԷ Մ. ՄԱՄՈՒՐԵԱՆ (Ա. Տ.) 505
ՎԱՀԷԻՆ ՀՈԳԻՆ (Գրիգոր Կ. Ցակոբեան) 509
ԼԻՎԱՆԱ (Թ. Տը Քուինսի) 513
ԱՆԵՐԵՒՈՅԹ ՊԱՐՈՆԸ 518
ՏԷՐ ՔՆԱՅԻՒ ՉՐԱԲՈՒԺՈՒԹԻՒՆԸ (Մ. Նուպարեան) . 524
ԻՄ ՅՈՒՇԱԴՐԵՐՍ (Մ. Մ.) 527
ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ 535
ՍԱՆԱՍԱՐԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ 535

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ԵՐԿՐՈՐԴ ԸՆԹԵՐՑԱՐԱՆ

Մ. ՄԱՄՈՒՐԵԱՆ

Աւելի ճոխ բովանդակութեամբ եւ գանազան նորանոր պատկերներով յոյս տուած է սոյն գիրքերգասիրական վէպերուդ տպագրութիւնն:

ԳԻՆ 3 ՂՐՈՒՇ

ՄԱՄԼՈՅ ՏԱԿ

ԱՄԵՆԱՆԱՆՑ ՊԱՐՏԷԶ

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ

Յաղուվիդակաւ բանաստեղծութիւն եւ այբենարան

ՅՕՐԻՆԵՑ

Կ. Վ. ՊԱԼԱՊԱՆ

ՉՈՐՐՈՐԴ Տպագրութիւն՝ բարելաւեալ եւ նոր պատկերներով ճոխացեալ

ՏՊԱԳՐ. Մ. ՄԱՄՈՒՐԵԱՆ, 1897

ԳԻՆ 2 ՂՐՈՒՇ

Ս. ՍԻՎՐԻԱՐԵԱՆ ԵՒ ԸՆԿՔ

ՄԵԾ ՎՃՃԱՏՈՒԹԻՒՆ

Այն համբաւաւոր վաճառատունն՝ ուր կը ծախուին զանազան բամպակեղէն, բրդեղէն, մետաքսեղէն նիւթեր, վաղուց կը վայելէ ոչ միայն իզմիրի ամէն հասարակութեանց համարումն, այլ և իր բոլոր գաւառային յաճախորդներուն վստահութիւնը որ արդէն քալ դնահատած են իր ապրանաց ընտրութեան, տոկունութեան լաւութեան, չափերու ճշտութեան և գիներու անհամեմատ չափաւորութեան զգալի առաւելութիւններն, այնպէս որ մինչ դոհ ձեռացած և այն վաճառատունը պատուած են իրենց յանձնարարութեամբ՝ ինչպես ցարդ նոյնպէս և այսուհետև Սիվրիսարեան վաճառատունն պատրաստ է միևնոյն դիւրութիւններն ընծայել ուղղայս յաճախորդներուն, և յատկապէս գաւառացոց ուշադրութիւնը կը հրաւիրէ վերոյիշեալ առաւելութեանց վրայ։ Պարտին վստահ լինիլ թէ իրենց յանձնարարութիւններն գրով կամ գործակատարներու միջնորդութեամբ, ամենայն ճշտութեամբ ու փութով պիտի կատարուին։ Ընտրակոյս գաւառացի և տեղացի նոր յաճախորդները պիտի վստահ, անձամբ դիմելով վարձել, ապրանաց գերազանցութիւն, Սիվրիսարեան ընդարձակ մթերանոցներու մէջ՝ որ կը դանուին՝

ՁՐԻ ԴԱՍԱԽՕՍՈՒԹԻՒՆՔ

ՄԵՍՐՈՊԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ ՄԷՋ

ՄԵՍՐՈՊԵԱՆ-ԳՐԱՍՏՐԱՑ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Անուս պատանիներու դասախօսութիւնք կը լինին՝ Հայերէն, Անգլիերէն, Ֆրանսերէն և թուրք լեզուներով, ինչպէս նաև թուաբանութեան և այլն. Շաբաթը երեք անգամ ի՛րիրակէ առաւօտ ժամը 10 — 11 ½, երեքշաբթի և Հինգշաբթի երեկոյները ժամը 7 ½ — 9։

Աշակերտաց թիւն հասած է այսօր մինչև 88։ Արդ ամէն այն անուս պատանիրեն, որոնք չուկայի մէջ գործով կամ արուեստով մը կ՛զբաղին, թող փութան օգտուիլ այս առթէն, երբ ամէն ինչ Ձրի կը տրուի իրենց — դասախօսութիւնք, դիրք, թուղթ, եւ։ 5—24

ՄԵԾ ԳԵՐԶԱԿԱՏՈՒՆ

ԳԷՈՐԳ Մ. ՔԷՇԻՇԵԱՆ

Ա.պաՀվածառանց Եառաֆեան ֆերիանէն կ՚ըլլ, Թէ— 1

Վաճառատունս հաստատուած օրէն իվեր տուչ ժամանակին մէջ ունեցած գործակիցներս, ապացոյց մը են թէ՛. մենք մեր յայտարարութեան հաւատարիմ գտնուած ենք, Հարկ չկայ՝ գովեստներ չտալել՝ յայտ, մեր գործերը իսկայն են արդէն՝ թէ գներու ժամանակութեան հետ նաև ունինք մեծ առաւելութիւն՝ մը ուրիշ նմանօրինակ հաստատութիւններէ ձեւի, կարի և ապրանքի մասին։ Երեակայեցէք թէ օրչափ դժուարին է ամեն մէկ անհատի Ճաշակը գոհացնել և ձեին յարմարութիւն տալ, նա մանաւանդ երբ այդ անձը առաջին անգամ է որ հագուստ չինել կուտայ մեզ։ Ուստի ինչպէս մինչև այսօր, նոյնպէս ալ այսուհետև ալիսի՛ջխատինք ամեն ջանք և զոհողութիւն չի խնայել նոյն իսկ ամենէ բծախնդիրները անգամ գոհացընել։

Աւելորդ չենք համարիր նաև իմացընել թէ վաճառատանս մէջ կը գտնուի քազմիրներու, Ֆասոններու և այլ տեսակ աուելիներու մեծ հաւաքածոյ մի, և թէ պատրաստ կարուած հագուստներ ալ ունինք։

Ա.ժան, ձեւաւոր եւ տոկուն, դիմեցեր եւ տեսէք։

4—24

ԸՆՏԻՐ ՔՕՆԻԱՔ

Διαμαντένης Αντρικένης και Σας

ՍԱՄՈՍԻ ՄԻՍՔԷԹ ԽԱՂՈՂԻՆ

Ինչպէս ծանօթ է ամենուն Սամոսի միսքէթ դէնին աշխարհի վրայ կը գերազանցէ միւս բոլոր իր նմաններն, հետևապէս այդ խաղողէն չինուած ՔՕՆԻԱՔՆ ճշտօրէն համապատասխան քիմիական նորագոյն պահանջմանց, ոչ թէ միայն կրնայ մրցիլ, ծանօթանալի մէջ և այլուր, պատրաստուածներն թէ գնոյն և թէ տեսակին կողմէ, այլ նաև կրնայ առաջինն համարուիլ Եւրոպայի մէջ պատրաստուած բոլոր քօնիաքներէն։

Սամոսի մէջ հիմնեալ առաջին միակ հաստատութիւնն է այս գործարանն ուր չինուած ՔՕՆԻԱՔՆ առաջինն է գուտ Միսքէթի խաղողէ։

Հետևապէս այս քօնիաքն իր գերազանցութեամբ արդէն հռչակ հանած լինելով, վստահ ենք որ Աբգոյ Հայ հասարակութիւնն, անգամ մը փորձելով պիտի գըտնահատէ անոր գերազանցութիւնն և պիտի զգուշանայ ուրիշ քօնիաքներ գործածելէ, վասն զի մեր քօնիաքի տեսակին մի՛ և չունի երկրորդական կամ երրորդական տեսակներ։

ՍԱՄՈՍԻ ՔՕՆԻԱՔՆ մեծ քանակութեամբ ունենալ վաճառքդիք պարտին դիմել Կիրիա խան թիւ 48, Կ. Ցովվել, Դ. Մարտիրոսեան և Ընկեր., իսկ մանրաքանակ գնողներն կրնան դիմել Շերպէտճիներու մէջ թիւ 101 Յովհէվ Էլմակէզեանի, և Հայոց թաղ՝ Պրնք. Դ. և Լ. Շերիաճեանի, ինչպէս նաև Շիշէճիներու մէջ Մեծ. Գէորգ Բէշիկեանի և բոլոր չաքարավաճառներու մօտն։

Գիներն անհամեմատ աժան են մրցելու կարող հրապարակիս վրայ գտնուած բոլոր քօնիաքներու հետ։

Կ. ՑՈՎՀԷԼ, Դ. ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ ԵՒ ԸՆԿ

Միակ ներկայացուցիչք

Թուրքիոյ Եգիպտոսի, Անգլիոյ և Միացեալ Նահանգաց։

Յ. Գ. Ամէն անձ որ կը փափաքի վերոյիշեալ երկիներու ապրանքի վրայ տեղեկութիւն հաստատել Սամսի Բնիեափ գործակատարութեան, կրնան դիմել Զմիւռնիոյ Ընդհ. Գործակատարութեան վերջնատեղին, կիբիս խան թիւ 48։

Ց. ԳԱՐԱԳԱՇԵԱՆ և Վ. ՋՄՒՌՆԱԿԻՍԵԱՆ

ՃԱՄԱՓՈՐՁ

Պատիւ ունինք ծանուցանել արդոյ հաստարակութեան թէ ի Յուհա Պէտեմբ. ն թիւ 14 մեր նոր բացած վաճառատան մէջ կը ծախուին մեծ և փոքր քանակութեամբ ամեն տեսակ ժամացոյցներ. ոսկիէ, արծաթէ, նիքէլ, սև oxidé, զարնող, ամսացոյց և քրօնօմէթրը պրսպանի ժամացոյցներ։

Զարթուցիչ, պատի և դպրոցի մեծ ժամացոյցներ (pendules)։

Զանազան տեսակ գոհարեղէնք ինչպէս ասլարանշան, քարֆիցա եւն։

Ժամագործներու և ոսկերչաց վերաբերեալ ամեն տեսակ գանազան գործիներ։

Հոս կը յարդարուին ամեն տեսակ ժամացոյցներ լրապէս երաշխաւորեալ։

Ժամացոյցներու վաճառումն և յարդարումն արտակարգ ջեղջեալ գիներով կ'ըլլան։

ՄԵԾ ՆՊԱՐԱՎԱՃԱՌՈՒԹԻՒՆ

Հայոց մէջ Ք-ՈՂ

Դ. եւ Լ. ՃԷՐԻՏՃԵԱՆ

Պատիւ ունինք ծանուցանել Արդոյ Հաստարակութեան և մանաւանդ բարեբար մեր Պատ. Յաճախորդներուն թէ, վերջերս մեր վաճառատունը խիստ ճոխացուցած ենք զանազան ուտեստներով։

Մեզ դիմողը ամեն ինչ պիտի դտնէ շատ ժաման գիներով։

Ունինք նաև Ալփիաբի և ուրիշներու ընտիր օճառներ, նոյն գործատուններէն ծախուած գիներու վրայ ԱՒԱՆՑ ամենափոքր յաւելադրութիւն մ'ընելու։

Գիւրութեան համար մեր Յաճախորդներուն հաշուեհամարներ կը յանձնենք և մեր սովորութեան համեմատ հաշիւները ամիսը անգամ մը կը փակենք,

ՈՂՋԱՄԻՏԱՏ ԱՅՆՈՒԹԻՒՆ 13—24

ԿԻՍԱՄՍԵԱՅ

ԹԷ. ՏՕՐԻ

ԹԻՒ 15 — 1 ՕԳՈՍՏՈՍ 1897

ՎԱՀԷ Մ. ՄԱՄՈՒՐԵԱՆ

Յա՛ւ ցաւի վրայ, սո՛ւգի սուգի եռաւ, ահա՛ ինչ որ անուղղք ճակատագրի մը բերմամբ տարիէ մ՚ի վեր տխուր բաժինըն եղած է Մամուրեան զերդաստանին. . . : Անցեալ ղժրաշաւտիճեան մը համար խափուռզ աբգունքները հասիւ ցամքած՝ ահա՛ ուրիշ մըն ալ կը բացուէր կո՛ւլ տալու համար այդ զերդաստանին ամենէ ապիւռ մէկ չտաւիղը — մեր և ամենուն սիրած ու գգուած Վահէ Մամուրեանը՝ (Յունուար 1876 Դեկտ. 4) քանի ու մէկ տարեկան ծաղիկ հասակին մէջ

Կաֆալի դէպքը կը պատահէր անցեալ ամսոյն 13ին կիրակի առաւօտ ի Պուճա, ուր վոխադրուած էր Մամուրեան ընտանիքը՝ դարմանելու համար իրենց հոգեհատոր զաւկին հիւանդութիւնը, որ առ ոչինչ դրելով բժշկական ամեն դեղ ու դարմանիք, անողոք յամառութեամբ և ահռելի արագութեամբ կը չարունակէր իր աւերումներն ի գործ դնել, հազիւհազ հիւծելով այն երիտասարդը՝ որ աւա՛զ, դեռ տարի մ՚առաջ կայտառ, աշխոյժ և կորովի, կենայ զարնան անուշաթոյր ծաղիկ մ՚էր դեռ ափիթիթ՝ համակ լցուած ներկինից չաղուիլ ու չաղուիլ . . . ։ Ո՛վ տխուր ճակատագիր . . . ։ Եւ սակայն ապազայ ի՛նչ վայլուն յոյսեր կը խաստանար վաղամեռիկ հանգուցեալն, որ իր անթիական հասակին մէջ իսկ իր վրայ կը կրէր հասուն տարիքի պղօնութիւնն ու խոհեմութիւնը։ Մանուկ հասակէն ընտանեկան տաքուկ ու անուշիկ բոյնին մէջ անած ու մեծցած, իր հեզ և հլու վարմունքով, դաղտր ու ոլորքալի ձևերով, ընտանեաց ոգւով և գորովից ու խանդակաթ սրտով ո՛չ միայն Տիկին և Տեար Մամուրեանի տան ճլուրտուղ մոչիկը, յոյսն ու ուրախութիւնը, այլ և համայն ազգականաց և բարեկամաց սէրն ու հրճուանքըն էր այն։ Ո՛չ ոք մոռնացած էր անոր՝ առանց հրապուրուելու այն մարդասիրական դիւրահաղորդ բնաւորութենէն, որ ազնիւ հոգւոյ մը յայտարար նշանն է։ Բայց անո՛նք մանաւանդ, որոնք առիթ ունեցած էին աւելի մօտէն քննելու այդ նորածիլ իմացականութեանն բիւրեղը, անոր վրայ ողջունած էին ապագայ գրագէտը = 20րդ դարու Մամուրեանը։ Մատաղ տարիքէն եռանդուն սիրասիրաբար ըլլալով ուսման և դիտութեան, իր բազմաթիւ ընկերներէն հոգ աչքալուրջ հսկողութեան ներքեւ նախնական ըսկզբնքը աւարտելէն ետք՝ երկու տարի Պէրայէրեան հոչակաւոր վարժարանի մէջ Հայ լեզուի և դրականութեան պարապած և ջութջ երկու տարի ևս տեղւոյս Պաբէլի նշանաւոր դպրոցին մէջ ռնդլիերէն և ֆրանսերէն լեզուաց ուսումը կատարելագործելու հետամուտ ըլլալով՝ այնուհետև եռանդագին պճնասուր եղած էր դրականութեան, զոր ամեն ատպարէզէ աւելի նախասիրած էր։ Ընտանեկան մոխ մատենադարանի դրեանց մէջ թաղուած՝ հայրս

կան իմաստուն առաջնորդութեան ներքև մէկ կողմէն միտքը կը ճախճացնէր նորանոր ուսումնասիրութիւններով և միւս կողմէ միայնութեան մը վազահաս նշանները ցոյց կուտար՝ կարուկ, սուր և մերթ հեգնական դիտողութիւններով մարդոց և իրաց վրայ։ Քանի՛ քաղցր և հաճոյալից էին այն ժամերն ուր մտերմական համախմբութեանց մէջ հայ դրականութեան նահապետը՝ չրջապատուած իր որդիներով և բարեկամներով, ընտանեկան երջանկութեան գիտակցութեամբը դոհ և վստահ՝ երանութեամբ կը ճառագայթէր, գոդցես ըսելով. «Ահա՛ ես և մանկունք իմ զոր ետ ինձ Աստուած։» Բա՛րէ, տարիէ մի վեր այդ համախմբութիւնը, թէև արտաքուստ զուարթ և աշխոյժ, յայտնի տրխրութեամբ հատակուած էին։ Մնաս բարովի վերջին ժամերուն պէս թախծալից և արտայայտ էին անոնք։ Մաքուր և անբասիր հոգիի մը մօտալուտ բաժանման տխուր նախազգացումն էր որ ճակատներն կ՚ամպոտէր և աչերն արցունքով կը խըղձէր։ Այլ ինք քանի՛ հարբերատար էր և սրի՝ իր հիւանդութեան տառապագին օրերուն մէջ։ Մտայիկեան անտարբերութեամբ կը դիտէր օրէ օր իր քայքայուիլը, հալումաշ հիւծիլը։ Բայց բնութիւնն ու երիտասարդութիւնն ալ պէտք էր որ իրենց բաժինը ունենային։ Այն տեղ տենդատ աւիւնով մը կեանքին կը յարէր։ Ապրիլ կ՚ուզէր դեռ՝ վայելելու համար կեանքն ու իր ղեղեցկութիւնները, և մենք ակամայ սարսուռով մը կը յիշէինք վազամեռիկ բանաստեղծին վերջին վայրկեանը.

Ո՛հ կը դողդոջեմ, տժգո՛յն եմ տժգո՛յն,
Փոխրի ներսըս դժոխքի մ՚հանգոյն . . . :
Հառաչ մ՚եմ հեծող ևոմերու մէջ ան,
Թափելու մեծ չոր աշնան մեկ տերեւ . . . :
Ո՛հ կայծ տուէք ինձ, կա՛յծ տուէք, ապրիլ . . :
Ի՛նչ, երազի վերջ գրկել ցո՞ւրտ շիրիմ . . .
Այս հակատագիրն ի՛նչ ան է, Ա՛ստուած,
Արդեօք դաւթեանի մուսո՞վ է գծուած . . . :
Ո՛հ տուէք հոգւոյս կրակի մի կաթիլ
Միրել կ՚ուզեմ դեռ, ապրիլ ու ապրիլ . . . :

Հէ՛ր երիտասարդ· և իր ապրելու այս բուռն տենչին՝ պահ մ՚աչերը կը բոցավառէին կենսական չարչերով, մօշնած այսերուն վրայ կարմիր վարդեր կը բացուէին և ժպիտը, վերջալուսական նուաղուն ցոլքերով կուգար խաղալ տմոյն չըրթանց վրայ։ Ա՜հա՛ այն ժամանակ չուրջը գանուողք իսկ իրեն հետ գեռ կը յուսային ապագային համար, ծրագիրներ կը կազմուէին, կարգադրութիւններ կըլլային յաւերժիկայ ճմրան համար։ Մ՚վ ահռելի պատրանք։ Յուլիս 13ի առաւօտը կայծակի նման կը հասնէր ամեն հաչիւ վեր ի վայր չրջելու և հոգիները ահարկու սարսուռով մը ցնցելու։ Վայրկենական եղաւ իր հոգեվարքը, անցուդարձ պէս բան մը՝ երկրէս դէպի երկինն։ Պրաւինչիկ տատրակին ալեհեր վաւաւուին նման իր յետին մրմունջն արձակելով՝ ծռեց իր հնգիկ գլուխը և հէք մարկան թևերուն մէջ փչեց իր անարատ չունչը . . . ։

Յուղարկաւորութեան ախտր հանդէսը նոյն օրուան երեկոյին ժամը 5ին կատարուեցաւ ի Պուճա հանգուցեալին տունը։ Ս. Աստուածորդ Հայրը քահանայից դասուն հետ և ընտրեալ բազմութիւն մը փութացեր էին իրենց վերջին յարգանքը ընծայելու հանգուցեալին։ Դագաղը պարզ արուած էր ծաղկեփունջերով զոյս զրկած էին Տիկին Վարդուհի Գ. Զիլինկիրեան, Օր. Խոլուհի Թօզաճլեան, Տիկին Տիգրանուհի Կոստանեան, Օր. Թագուհի Տամկաճեան, Տեարք Մերկեր Մերկերեան, Յակոբ Գասպարեան, Տօք. Չէլէպեան, Յակոբ Ալթիպար, Մինրան Ալճաւորեան, Գրիգոր Յակորեան, Մինրան Ղազարոսեան, Հրանտ Մամուրեան։ Իսկ փոխան ծաղկեայ պսակի, իւրաքանչիւր հանգուցեալին՝ հետեւեալ նուիրատուութիւնք եղած էին.

Յակոբ Միքայէլեան	1/2	օսմ· ոսկի	Աղգ·	Հիւանդանոցին	
Մկրտիչ Սարըեան	2	մէճիտ	»	»	
Սարգիս Մուրատեան	3	»	»	»	
Հազ· — Որբանոցի Ընկ·	5	»	»	»	
Աբրահամ Յ· Աբգարեան	4	»	Որբանոցին		
Ներսէսեան Որբասիրաց Ընկ·	6	»	Աղքատախնամ Ընկ·		
Աղքատախնամ »	3	»	Ներսէսեան	»	

Ժամը վեցն էր և այս տարաժամ մահուան անմեղունակ զոհէն հոգարբուր մը միայն կը մնար՝ ծաղիկներով ծածկուած։ Ներկայից աչերն արտասուօք առկայացած էին և ալեզարդ հօր և հարազատին սրտերն խոպոռ խորտակուած՝ այս ծանրածանր հարուածին ներքև։ Ցուզարիաւորք արտուտ մխուր կը հեռանային մեռելոց քաղքէն, բայց կը թուէր իրենց տակուին տեսնել սիրեցեալ վ.ահէի պատկերն գեղեցիկ, լսե՛լ գեռ անոր ձայնին արձագանգն ոլորանալը, որ այս անգամ հեռուէն, չ՛ա հեռուէն կը հնչէր իրենց ականջին, գոգցես Յաւիտենականութեան բարձունքէն . . . ։

Ա. Տ.

ՎԱՀԷԻՆ ՀՈԳԻՆ

Քու, ոչ ապաքէն, հոգեբնիկ
հայրիկ, մայրիկ, ու եղբայրիկ

Երկի՛ մանչուկ սենեկին մէջ՝ երկու ամուռներու վրայ դրած էին, վ.ահէ, քու մարմինդ սպիտակ գագաղը որու վերայ մահահատ պատիներ կային զետեղուած։ Երկու մոմեր՝ մեծ մոմակալներու մէջ՝ քու մօտդ կը վառէին ու կը հատնէին . . . — մոմերն իրենց հատնումին գիտակցութիւնը չունին . . . — ։ Կարծես միտքս գեռ չէր իմացած սարսափլի իրականութիւնը, ա՛նքան չէր կրնար հաւատալ, չէր ուզեր համզուիլ անոր։ Զէր ըմբռներ որ այլեւս չկայիր գուն . . . ։

Ու սակայն՝ սենեկին մէջ՝ երեցաւ Խաչը, քահանաները աղօթքի գիրքեր առին ձեռքերնին, բուրվառը մխաց, խունկին հոտը բոլորացաւ և վարդապետը՝ գլուխդ վրայ՝ Խաչին ճիշտ դիմացը՝ սկսաւ քու հանգիստդ աղօթերգել Բարի Աստուածին։

Բարի՛ . . . ։ Ո՛չ, Բարի՛ է Մեծ Անծանօթը, քանի որ բարին գոհ ունի և պազպազիդ հանդէպ՝ անգութ, դժոխային սատանն անգամ գիմած, երկնային հրեշտակի մը պիտի փոխուէր։

Ո՞ր կիր . . . Աչքերս ի վար պարտեցան անենկին մէջ ուր աղօթք կը մրմնջուէր, սեւեռեցան մոմերուն վրայ և ապա պատուհանէն դուրս՝ Երկինքի անհունութիւնը խուզարկեցին։ Հոն կիր . . .

Զղխմացաւ, ա՛լ յորդեցաւ հոգիս։ Սկսայ մտածել. «Եթէ կայ իսկ, բարի չէ . . . », չկրցայ մտածումս աւարտել։ Շուշանչ մը փչեց ուշ գիշերի խաչը ու մտածել տուաւ թէ կար, կայ ու միշտ մնայ . . .

* * *

Այսօր՝ այդուն՝ մարմինիդ վերջին կայանին վրայ մտածելու եկայ, վ.ահէ։ Մտածել՝ աղօթել է ու թերևս աւելի։

Անցնելով տապանաքարերու ու դամբաններու առջևէն, որոնց տակ փոշիացած կան ժամանակով չարժուն ու մտածող էակներ, հասայ թարմ, չա՛տ թարմ հողակոյտի մ'առաջ որու վրայի պսակները՝ անզգայ իրենց դանուած վայրին՝ աւաւտեան ցօղին տակ՝ թեթևօրէն կը բուրէին . . . սակայն մահ, մահը տակաւին։

Հոն կանգ առի։ Զարս դիս բան մը չէր փոխուած, Երկինքը միշտ նոյն երկինքն էր, նոյն գոյնով, նոյն ամպերով. Արևը նոյն փայլն ու կրակը պահած էր, չէր աղօտացած բնաւին։ Հովը նոյնն էր միշտ։ Թռչուններն իսկ չէին հրաժարած իրենց դայլայլներէն։ Ու սակայն հոգի՛ մը թռած էր . . . Չկար այլ ևս ան զոր մանկութեանս ժամանակէն՝ քալել սկսած օրէս իսկ՝ քանի տարիէ ի վեր կը ճանչնայի, որու սիրտն ու հոգին իմիններուս այնքան ուսումնասիրած էի, որ այնքա՛ն բարի էր և ազնիւ ու վեհ, որ կը խօսէր, կը ժպտէր, կ'երգէր, կը մտածէր, որու ճակատին եաին ուզեղ մը կը խոհար, սիրտերդր կ'ըմբռնէր, Անծանօթին վրայ կը խորհէր . . . Անծանօթի՛ն . . . Հոգ ըմբռնելի մարդկութեան անհունապէս մեծութիւնն ու անհունապէս փոքրութիւնը։ Մեր միտքերը՝ մեր հոգի զանգուածին մէջ՝ որ երբեմն կը յաւակնին մինչև իսկ կարենալ հասնիլ անհունապէս Մեծ Անծանօթին, չեն ոչ ինչ աւելի քան չուրի մանրիկ կայլակներ որ վերէն, չա՛տ վերէն՝ վարի Մեծ Ովկէանին լանդալով հանդերձ՝ հո՛ն կը կաթկթին վերջապէս . . .

Նայեցայ, նայեցայ թարմ հոգակոյտիդ, վրայի պտակներուն և սկսայ, չեմ գիտեր ինչո՛ւ, մրմռալ «Հայր մեր» Աղօթքըն։ Սակայն այն ինչ ըսեր էի· «Եղիցին կամք քո որպէս յերկինս և . . .», որ, ո՛հ, կանգ առի. հոն գազրեցայ, չուզեցի արտասանել չէդնէ բառը . . . ։

Նոյն ակնթարթին՝ հեռաւոր ղօրեղ ձայնի մը մէկ ալիքը հասաւ ինձ, երկիւանէն աւելի ուժգին և լսեցի այն ձայնն որ այսպէս ըսնէր·

* * *

«Բարի է Նա, գործած է բարին ու բարին պիտի գործէ. . . ։ Երազէ աւելի կամ նուազ երկար չրջանը որու դուք՝ վարը՝ կեանք անուանը կուտաք, այն նինջը զոր Իրականութիւն կ՚անուանէք, ելած է, Ոչինչ է . . . ։ Երկիր անուանած հողապնակին վրայ չրջող արարածները մեր լոյն Մթնոլորտին հոգիներն են որոնք քունի մը մէջ՝ իրականութեան կեանքն ապրիլ կ՚երազեն։ Ո՛չ, ո՛չ։ Հոգիներու կարմաւոր նինջն է երկրային կեանքը, անոնց ելոյթն է մեր կոչած Իրականութիւնը։ Ահա նինջին դուրս ելաւ ան արդ, զարթեցաւ և հոգիներու լոյն ու փառաւոր Մթնոլորտը՝ իր նախնավայրը դարձաւ . . . ։»

Լռեց ձայնը։ Մրմնջեցի· «բայց թող երազէր գեռ ուշ, աւելի՛ ուշ արթննար . . . ։»

Կրկին լսեցի·

«Թէև Մահը չուզեր որ իր գործերը քննադատուին վարի քնացողներէն որոնց մէջ եւ դուք ամենքդ, սակայն ցոյց տամ գոնէ բան մը զոր դուն ալ իր անմխիթարներուն յայտնես։ Ահա՛ . . . ։»

Եւ աչքիս երևցաւ սոսկալի տեսիլ մը . . . ։ Ձայնը փրփուաց· «Հոն եղած պիտի լինէր եթէ Նա դինք չարթնցներ։»

Իսկոյն ապա աչքիս երևցաւ լուսեղ, հիասքանչ Մթնոլորտ մը ուր բիւր հոգիներ, համակ լոյս ու թև, կը չարժէին անդադրում . . . ։

«Չո՛ւ է հիմակ» երգեց ձայնն ու լռեց։

* * *

Ե՞ր չէիր ըսի հանգիստ Աստրաեցի ազգիդ մտածելով որ, եթէ՝ ինչպէս Շաւիշն յայտնեց՝ եղածները չիներէին, ո՞վ գիտէ (և անշուշտ չենք գիտեր) ինչ երազներ պիտի տեսնէին մարդիկ (քնացած հոգիները) իրենց քունին մէջ զոր իրենց երազին մէջ իսկ կեանք կ՚անուանեն. . . :

14 Յուլիս 1897

ԴՐԻԴՈՐ Կ. ՅԱՄՈՐՅԱՆ

Մամուլեան սդակիը ընտանիքն՝ իրենց սիրելի որդւոյն տարաժամ ու ողբալի կորստեան առթիւ՝ թէ ազգ. Մամլոյ և թէ պաշտօնական ու անպաշտօն անձնաւորութեանց կողմէ ցոյց տրուած վշտակցական անկեղծ զգացմանց առջև՝ անհունս զգածուած, հրապարակաւ իրենց արտաքին չնորհակալիքը կ՚մատուցանեն այդ ամեն ազնուասիրտ անձերուս որ կամ իրենց ներկայութեամբ, կամ բերնանագի և կամ գրով կատեկից գտնուեցան վըշտաբեկ ընտանեաց։

Խմբագրութիւնս՝ ի յիշատակ ողբացեալ դերասնիս պատանւոյն՝ մտադիր է յատուկ տետրակի ձևով հրատարակել այն ամեն վշտակցական գրութիւններն որ հետզհետե կ՚ուղղուին՝ ի սիրտ ուն՝ որդեկորոյս ընտանեաց։

ԼԷՎԱՆԱ

Լէվանա՝ հին Հռոմի դիցուհի մ՚որուն պաշտօնն էր նորածին մանկան ճակտինվրայ աղնուարար բարութեան դրօշ մը դնել։ Եւ ի՞նչպէս — այն ինչ մանկիկը կ՚ծնէր և մեր մեղսակին պզտոյ օդը կ՚ծծէր, և ահա Լէվանա կը ներկայանար և զանի հողին վրայ դնելէ ետք, իսկոյն իր կողմէն հայրական աչն կամ ազդական մը զանի վեր կը բառնար չիտակ ու կանգուն՝ իբրև իշխանը բոլոր աշխարհին, և անոր ճակատը դէպ ի աստղերը դարձնելով՝ Թերևս մտովին կ՚ըսէր։ — Ահա այս վեհ է քան ձեզ։ —

Սակայն Լէվանայի կ՚վերագրուի և այլ պաշտօն մը, այս է՝ մանկութեան պաշտպան և դաստիարակիչ դերութիւնը, եթէ դիցուհին չէր հանդուրժեր բնաւ որ իր սանը նուաստանայ մարմնապէս, աւելի ևս պիտի չհանդուրժեր որ անոր հոգեկան բնաւորութ ոյժերն անմշակ մնալով հոգևին նուաստանայ։ Հետևապէս մարդկային դաստիարակութեան վրայ կ՚հսկէր՝ և դաստիարակութեամբ կ՚իմանար չէ թէ այն մեքենական դրութիւնն որ հեդևական ու քերականական կանոններու վրայ կ՚կայանայ, այլ այն կրթութիւնն որ մարդուս սրտին խորը թաղուն կենսական զօրութիւնները կ՚մշակէ, որ կրից, ճղանց, փորձութեանց, հակամարտ ուժերու դիմադրութեամբ մանկանց վրայ կ՚դործէ անդուլ։

Ապրդ՝ եթէ Լէվանա այս միջոցներով կ՚ազդէ մարդկութեան վրայ, որչափ և առաւել ահ ու դողով պիտի ղգածուի անոր ցաւերուն առջև։ Թերևս առարկուի որ մանկունք ընդհանրապէս անհաղորդ են մարդկային վիշտերու։ Բայց այս իրաւ է որ լիովին անմաան չեն և կարծուածէն աւելի կ՚զգուին այն զրկանաց որոց կ՚ենթարկին ծնողական անխոհեմութեան և ուսումնարանական անհեթեթ կանոններու բերմամբ։

Այսպէս ուրեմն Լէվանա կ'հաղորդակցի ամէն այն ղօրութեանց հետ որ կ'դղրդեն մարդուս սրտին ամենէ փափուկ և զգայուն թելերը։ կարելի է այս ղօրութիւնները երեք դասակարգի վերածել, ինչպէս են երեք Շնորհն, Պալլայ, կապոպէ, և ինչպէս էին երբեմն և Մուսայ։ կարելի է անուանել այլաբանօրէն այդ երեք քոյրերն, վերոյ ասէինք, որ չէ թէ անհատներն այլ համայն մարդկութիւնն հաւաքապէս կ'համակեն իրենց տաւտապանաց մէջ։ Այո՛, երեք խորհրդաւոր քոյրեր են համայնեղ, թէև տարբեր չափերը կ'բռնեն՝ իրենց տիրապետութիւնն անսահման լինելով։ Ամէն կ'տեսակցին Լէվանայի հետ, և մինէ կ'խօսի՞ն, Ո՛չ — այդպիսի ղօրաւոր ուրուականներ կ'անդոնեն լեզուի թերութիւնները։ Արդարև՝ կարող են ձայներ հանել մարդկային դործարանները միջոցաւ՝ երբ մարդկային սրտերու մէջ կ'բնակին, բայց իրենց մէջ ոչ ձայն և ոչ չշուկ կայ։ յաւիտենական լռութիւն կ'տիրէ իրենց պետութեան մէջ։ Լէվանայի հետ տեսակցելու միջոցին չէին խօսեր անոնք, չէին վրդովուար, չէին երդեր, թէև ամէն փափաքէին իսկ երդեցու, վասն դի երկրիս վրայ այդ վշոյ տէրք խորհուրդներն շատ անգամ լուսած են արտասուք ուսած տաւիղով, թմկով և երդեհանով։ Նման Աստուծոյ, որու սպասուհիներն են, իրենց հրճուանքը կ'արտայայտեն չէ թէ ձայներով որ կ'կորսուին, կամ բառերով՝ որ կ'մոլորին, այլ նշաններով յերկինս, այլ յեղաշրջումներով երկրի վրայ, այլ ցնցումներով գետերու մէջ, այլ խաւարի մէջ նկարուած պատգամներով, և աղեղի խորշերու մէջ գրուած մեհենական տառերով։ Ոլորապտոյտ կ'դառնային անոնք իրր բաւղի մը մէջ։ Նշմարեցի անոնց քայլերն — ի հեռուստա հեռադիր տուին, նշմարները կարդացի։ Միասին գաւակնիկ եղան, և խաւարին հայելիներուն վրայ այսքան ուրուադրեց ցաւերը։ Անոնք իրենց խորհրդանշաններն ունէին, նման են խօսքերը։

Ի՞նչ էին այս քոյրերն, ի՞նչ կ'ընէին։ Թոյլ տուէք որ նկարագրեմ իրենց ձևն ու ներկայութիւնը, եթէ կարելի

է ձև անուանել՝ ինչ որ իր ստուերագծին մէջ դեռ ևս կ'ատտանէր, կամ ներկայութիւն կոչել, ինչ որ ընդ յառաջ կ'ուրար միշտ, կամ ընդ միշտ կ'ընկրկէր։

Երեք քոյրերու անդրանիկը կ'կոչուի, Mater Lachrymarum — մեր Արտասուաց Տիրուհին։ Ան է որ գիշեր ցերեկ կ'ողբայ ու կ'կոծի՝ աներևոյթ դէմքեր վերակոչելով։ Նէ կեցաւ ի Հռոմայ, ուր ողբագին ձայն մը լսելի եղաւ . . . Ո՜ւ քէն էր որ իր զաւակներուն համար կուլար և չէր կամեր մխիթարուիլ։ Նէ էր գարձեալ որ Բեթղեհէմ կ'գանուէր այն գիշերն՝ երբ Հերովդէսի սուրը Անմեղ Մանկանց կոտորածը գործէր, որոց մանր ոսկերը կարկամեցան խապաո և որոց չարժուձևերն մերթ լսուելով վերին յարկերու վրայ՝ սիրականներու սրտերու մէջ սիրոյ բուռն յուզումները զրգռեցին, և երկնից մէջ անոտս չմնացին։

Իր աչերն են անուշ և նրբին, վայրագ և քնոտ ըստ կարգի։ ստէպ դէպ ի ամպերը դարձած, մերթ երկնից՝ դիմագրաւ։ Իր գլխին վրայ կ'կրէ պոակ մը։ Եւ ես մանկային յիշատակներէ գիտեմ որ նէ կարող էր դուրսը հովերու վրայ սաւառնիլ, երբ կ'լսէը սաղմոսերգութեանց հառաչներն կամ երգեհոններու որոտումն, և երբ նշմարէը ամարնային ամպերուն թաւալումն։ Ա՜յս քոյրն, երէցն, իր գօտիէն կախած ունի բանալիները, որ ամեն հիւղակ և ամեն պալատ կ'բանան։ Նէ բոլոր անցած ամառ կոյր մուրացկանին անկողնին մօտ նստաւ, մուրացիկ մ'որու բարեպաշտիկ դուստրն, ուր տարեկան, պայծառ դէմքով՝ դեղջական խաղի և ցնծութեան հրապոյրներէ հրաժարելով՝ իր վշտաբեկ հօր հետ օրն ի բուն կ'թափառէր փոշիից արահետներու մէջ։ Ա՜յս պատճառաւ Աստուած դանի լիապէս վարձատրեց։ Գարնան ժամանակ՝ երբ տակաւին աղջկան դարուն նոր կ'բողբոջէր՝ Աստուած զանի իր մօտ կոչեց։ Բայց իր աշազուրկ հայրն անդուլ կ'ողբայ իր դոռնէ վրայ։ տակաւին կ'երազէ կէս գիշերին որ վոքրիկ ուղեցոյց ձեռքն իր ձեռքին մէջ սեղմած է, և դեռ կ'արթննայ մխիթարեան մ'որ այժմ երկրորդ և աւելի խոր

մթաթեան մէջ կ'գտնուի . . . իր բանալիներուն զօրութեամբն է որ մեր Աբրահամեայ Տիրուհին իբրև ուրուական կ'ահաւի կ'այցելէ անքուն մարդիկը, անքուն կիներն, անքուն մանկունքն՝ գանգէնէն մինչև Նեղոս, Նեղոսէն մինչև Միսիսիբի։ Եւ այդ Տիրուհին, քանի որ իր սան անդրանիկին է և ունի բացարձակ տիրապետութիւն, թող որ անուանենք « Տիրամայր » ամփոփում։

Երկրորդ քայլը կ'կոչուի Mater Suspiriorum — Մեր Հառաչանաց Տիրուհին։ Նէ երբէք ամպերն ի վեր չբլներ, և ոչ հովերու վրայ կ'սաւառնին բնաւ պակ չկիներ։ Եւ իր աչունքն, եթէ տեսնուէին երբէք, ոչ անուշ և ոչ սուր պիտի լինէին, ոչ ոք կարող պիտի լինէր կարդալ անոնց պատմութիւնը· անշուշտ վաղամեռիկ երազներով, և մոռցուած անուրջներու բեկորներով լի պիտի լինէին։ Բայց նէ չթանար իր աչունքը իր գլուխն՝ որ ծածկուած է կիսամաշ քօղով մը, միշտ վայրահակ, ընդ միշտ գետնի վրայ յառած է։ Նէ չարտասուեր, նէ չհեծկլտար, բայց լռելեայն կ'հառաչէ մերթ ընդ մերթ։ Իր քայլը, Տիրամայրը, առէպ վոխորկալի և զայրագին, կ'գոռայ ահարկու ձայնով երկնից դէմ՝ պահանջելով իր սիրականները։ Բայց մեր Հառաչանաց Տիրուհին բնաւ արմնուկ չհաներ, բնաւ չխրոխտար, ըմբոստ անձուկներ չերազեր։ Քեռին ծայր հեղ է։ Այս է այն անուշութիւնն որ յուսահատին բաժինն է։ Նէ կարող է մրմնջել, բայց քունի մէջ. նէ կարող է փսփսալ, բայց լինքն իրեն միայն՝ վերջալոյսին։ Ընդուշտ կ'ծիչէ երբեմն, բայց մենաւոր վայրերու մէջ՝ որ իրեն սրտին պէս ամայի են, աւերակ քաղաքներու մէջ՝ երբ արևը մարը մուած է։ Այս քայլն Բարիայեն, Հրէից, բանտաւորին այցելուն է, յուսաբեկ ապաշխարողին՝ որ իր աչքն ընդ միշտ սևեռած է մենաւոր շիրմի մը վրայ, շիրիմ մ'որ իրեն կ'երևի անցելոյն արիւնալի դոհի մը կիսաւեր խորանը, որու վրայ ո և է նուէր՝ ներողութեան մը համար դոր կրնայ հայցել կամ վոխարինութեան մը համար դոր կրնայ վորձել, տպարդիւն պիտի ինայ։ Եւ որո՞նք կ'քալեն մեր Հառաչանաց Տիրուհւոյն հետ — ա-

մեն սարուկ՝ որ կէս օրին հրատապ արևուն կ'նայի՝ ցոյց տալով մի ձեռամբ վեհերոտ յանդիմանութեամբ երկիրըն, այդ հանրային մայրն՝ որ իրեն համար մօրու մ'է, և միւս ձեռամբ Սուրբ Գիրքն, այդ հանրային ուսուցիչն, որ իրեն համար կնքուած գոյ մատեան մ'է. այն կինն՝ որ խաւարի մէջ նստած՝ սէր չունի իր դլուխը պատապարելու համար, կամ՝ յոյս՝ իր մենաւորութիւնը լուսաւոր՛ելու, վասն զի այն երկնաձին բնազդներն որ կ'բորբոքեն իր բնութեան սուրբ սիրոյ սերմերն, զոր Աստուած ցանած է իր կնային ծոցին մէջ՝ ճնշուած կ'մնան ընկերային կապերու բերմամբ, և այժմ ընդունայն կ'սպառին՝ հնոց դամբանային կանթեղներու նման. ամեն կոյս՝ որ իր գարնանային ամիսը չանսած նենդուած է չարակամ ազդականի մը ձեռօք, որու դատաստանն Աստուած պիտի տեսնէ, ամեն կալանաւոր՝ որ գնտանի մէջ կ'տառապի, ամեն տարագիր՝ անողոք օրինայ և մտանութեան զոհ. ամեն մանուկ քառանչան ցաւագարութեան ենթակայ. Հառաչանայ Տիրուհին և ունի բանալի, բայց ստէպ չդործածուի, վասն զի իր տէրութիւնը դլխաւորապէս Շեմի վրաններու, ամեն կլիմայի վտարանդիներու մէջն է։

Իսկ երրորդ քոյրն, ամենէ ծադկահասակն, չունի ընդարձակ տէրութիւն, վասն զի եթէ ունենար և ոչ մարմին մը դոյութիւն պիտի ունենար, միայն այդ տէրութեան մէջ իրն է ամեն իշխանութիւն՝ իր դլխին՝ կերպերոսին նման աչառութեան, քան տեսողութիւնն աւելի վեր կ'բարձրանայ։ Նէ վար չհակիր, և իր աչերն այնքան բարձր երևնելով՝ այդ հեռատեսութենէ թագուն կրնային մնալ, բայց լինելով ինչ որ են, չեն կրնար թագվիլ. իր կրած եռեակ սև չղարշէն կարելի է դիտել նոյն իսկ հողին վրայէն՝ հրաշունչ թշուառութեան մը վայրագ լոյսն, որ ոչ առաւօտեան և ոչ երեկոյեան ժամերգութեանց ժամանակ, ոչ ցերեկն և ոչ գիշերն, դադար ունի։ Նէ Աստուծոյ դէմ չէ դիմագրաւ. նայնպէս նէ է խելագարներու մայրն ու ինքնասպանութեանց թելադրիչն, խորամանաւ է իր զօրութիւնը, այլ անձուկ իր սիրտ ակռաստած ժո-

ղովուրդը, վասն դի կ'մօտենայ միայն անոնց որոց խորին բնաւորութիւնը կենսական ներքին պայթուցիներով վըրդոված են, որոց սիրտը կ'դողդողայ, և ուղեղն ներքին ու արտաքին փոխորիկներէ կ'տատանի։ Տիրամայրն անկայուն քայլերով կ'ճեմէ, արագ կամ ծանր, այլ սակայն հղերական չնորհքով։ Հառաչանաց Տիրուհին վհերոտ ու դողունի չարժուձիներով կ'օահի, իսկ ամենէ դեռատի քոյրն անբացատրելի չարժուձիներով յառաջ կ'քալէ՝ ոստոստելով վագրի նման։ Նէ չունի բնաւ բանալի, վասն դի՝ թէև ստէպ չերևիր մարդկան մէջ, կ'խորտակէ ամեն դուռ՝ երբ հարկ տեսնէ ներս մտնել։ Եւ իր անունն է —Mater Tenebrarum — Մեր Խաւարի Տիրուհին։

(Քաղուած) Թ. ՏԸ ՔՈՒԻՆՍԻ

ԱՆԵՐԵՒՈՅԹ ՊԱՐՈՆԸ*

ՊԱՆԻՆ ՅԱՓ.

ՏԷՆԴՀԸՄ ՊԱՅՄԱՆՆԵՐ Կ'ԱՌԱՋԱՐԿԵ

Ճինղլի պանդոկն՝ Թէը Սկին Տայալ անպիտան թաղին մօտ կ'գտնուէր, և Պ. Ճինղլ՝ կալուածատէրն, Տէնդհըմի մի բարեկամն էր։ Էմմդէյի մէջ տարօրինակ դիւտն եղած օրուան երեկոյին՝ Տէնդհըմ՝ պանդոկին եաևի մէկ փոքրիկ ու մութ սենեկին մէջ նստած՝ եռանդով կ'լսէր նոյն ինքն իր տիրոջ՝ Տոք. Միչէլ Ռամրամայրի հետ, որ Մարլօէն եկած էր Ճինղլի պանդոկն ժամը չորսի չոգեկառքով՝ Տէնդհըմի կողմէ իրեն ուղղած հեռադրական հրաւէրին վրայ։

Ամրիան երկու սուրի մէջ էր, քանի որ չդիտէր թէ ի՛նչ ճամբայ բռնէ։ Այն հեռադիրն որ իրեն կ'աղդարարէր Էմմբսդէյտ չերթալ, եթէ չէր ուզեր ձեռնակալուիլ, կայծակի մը պէս իջած էր գլուխն վրայ, և իսկոյն քաղաք իջեր էր Տէնդհըմը տեսնելու համար։ Այդ պարոնն իր վարձքն ընդունած էր Օր. Օ.իվ Մընսըրսի կողմէ և իր զրպանն ունէր հարիւր քսանհինգ

* Տես, Ա. Մոռ., թիւ 14։

ոակի, ոակայն այս գումարը բաւական չհամարելով, որ իրեն համար հարստութիւն մ'էր, կ'աշխատէր դրամական նոր պայմաններ առաջարկել իր տիրոջ և անոր մէջ աւելի գումար մ'ալ շորթել։ Ջունէր այլ ևս իր կեղծ ու պատիր ձևերն, Ասրիանի դիմացը նստած էր արմուկները սեղանին վրայ, և յաղթական կոչտ ակնարկ մը կ'ուղղէր իր գործակիցին վրայ։

— Արդէն դիտէի պատահելիքն — կ'ըսէր նա հեգնական ձայնով մը։ — Եթէ այն երիտասարդին վրայ գաղտնիքն ինձ խորհրդաբար յայտնէիք, կարող պիտի լինէի ձեզ օգնել, բայց հիմակ շատ ուշ է . . . իսկ եթէ իմ պայմաններս ընդունիք . . .

— Ի՞նչ կուզես որ ընեմ — հարցուց Ասրիան յուսահատ, քանի դիտնալով թէ այդ անշահ մարդուն լուծին տակն է, և միւս կողմէ իր բռնելիք ընթացքը չէր կարող որոշել։

— Ի՞նչ կուզեմ որ ընկ.ք — ըսաւ Տէնդհըմ ծաղրարար, — կուզեմ որ երկու հարիւր ոսկւոյ չէք մը տաք ինձ։

— Եւ եթէ այդ խնդիրը կատարեմ — յարեց Ասրիան՝ իր աչքը սևեռելով Տէնդհըմի դէմքին վրայ։

— Լաւ, ձեռքս եկածը պիտի ընեմ որ այդ դժուարին վիճակէն ձեզ ազատեմ — պատասխանեց Տէնդհըմ մեղմիկ ժպտաւալ մը։

— Եւ եթէ մերժեմ խնդիրդ։

— Ո՛հ, այդ պարագային ձկ՛ իսկոյն ոստիկանութեան պիտի երթամ և ամեն բան պիտի յայտնեմ։

— Կրա՛ւ կըսես — յարեց Ասրիան հեգնոտ ժպիտով մ'ևս իր երկայն ալէզարդ մօրուքը շոյելով։ — Եւ ի՞նչպէս պիտի հանես ձեռքակալութեան պատուիրագիրն . . . քանի որ փաստ չունիս։

— Ո՛հ, կատակ մի ընէք ինձ հետ — ըսաւ Տէնդհըմ պարծուկ ձայնով մը — վասն զի ես միայն կարող եմ ձեզ ազատել այդ ծանր վիճակէն, և այդ ընելու համար կ'պահանջեմ որ կամքս կատարէք։

— Ո՛հ, այո, պիտի ազատես . . . դրամի համար — պատասխանեց իր ակրը սրտզ արիւնով — այս բաւական չէ, կուզեմ նաև սպասել այդ պատմութեան ճշմարտութիւնը։

Տէնդհըմ կ'կատղէր քանի կ'դիտէր իր տիրոջ հանդարտ ու անվրդով ընթացքը։ Նա կ'յուսար որ զարհուրած մարդ մը պիտի դանէ իր առջև, մարդ մ'որ իր ազահութեան համար պատրաստ պիտի լինէր ոևէ գումար մը վճարել, մինչդեռ իր զոհը այնքան հանդարտ կ'թօսէր որ կարծես թէ մարդասպանութեան յանցանքով ամբաստանուած չլինէր։

— Եթէ արդէն ըսածներս չեն համոզեր ձեզ, ուրիշ ոչ ինչ կրնայ համոզել — ըսաւ Տէնդհըմ երդիծօրէն։ — Մինչ արդէն չըսի՞ որ Մարլօ՞ն Նալաւ համար առած հրաւէրդ լոկ պատրուակ մ՚էր։ Ես արդէն հասկցած էի դաւազանին միջոցաւ որ Պ. Լանգսդրր ձեզ հետ էր այն դիրերն։

— Թէև ուրացար որ այդ պիսի դաւազան մը տեսած լինիս — վրայ բերաւ Աարիան հանդարտօրէն։

— Այդ իմ գործս է, դուք ըսիք թէ այն դաւազանը ձերն էր, և սուտ խօսեցաք Լաւ, Օր. Մընտըրսի ծանուցման պատասխանելով ամէն բան անոր յայտնեցիր։

— Ուրիշ խօսքով, մատնեցիր զիս։

— Ինչ կերպով որ կուզէք առէք, բայց ես պարտաւոր էի ստակ չահիլ և Օր. Մընտըրս իմ տուած տեղեկութեանս վրայ էն լուրի վճարեց ինձ։

— Ուրեմն հիմակ՝ զիս մատնելէն և վճարուելէնետև՝ միթէ ունիս օրիորդն ալ մատնել նմանօրինակ վարձատրութեան մը համար։

— Ես սովոր եմ միշտ հնձել երբ արևը կ՚փայլի — պատասխանեց Տէնդհըմ ազեղ ժպիտով մը, վասն զի չէր ուզեր որ իր երեսին տան իր վատութիւններն։ — Ես ինչ որ ըրի ձեզ չվերթերիր. իմ գիտցածս այս է, որ այս օրիորդ Մընտըրսը և Պ. Ռիւսօլ այս առաւօտ տունդ գացին, Պ. Լանգսդրի մարմինը գտան ուր որ թաղչած էիք և ոստիկանութեան դիմեցին։ Եթէ իմ հեռագիրս Մարլօ չղրկէի, տուն պիտի վերադառնայիք և անմիջապէս պիտի ձերբակալուէիք, բայց ես ձեզ աղատեցի ...։

— Մի միայն նպատակիդ համար — ըսաւ Աարիան պաղ ժպիտով մը։ — Տէ՛ր Աատուած, ինչ անզգամներ կան աշխարհիս վրայ։ Այսպէս ուրեմն կ՚կարծես թէ Աարիան Լանգսդրը սպաննած եմ։

— Բոլորովին ատոր եմ — պատասխանեց Տէնդհըմ արագ օրէն։ — Ես անմամբ տեսայ անոր դիակը։

— Եւ ո՞ւր է հիմակ — հարցուց Աարիան իր ամբոխին տալով կռնակը։

— Հիմակ Պիրայլ Աքուէրն է, թիւ 40։ Օր. Մընտըրս ոստիկանութեան հրամանաւ՝ այն տեղ տանել տուաւ մարմինը՝ այս կէս օրէն ետք։

— Ուրեմն ձերբակալութեան հրամանագիր մը կայ ինձ դէմ։

— Այո՛, Պ. Լանգսդրը սպաննած լինելուդ համար։

— Ու եթէ երկու հարիւր ոսկւոյ համար չէք մը տամ քեզ պիտի օգնե՞ս ինձ որ խոյս տամ։

— Իմ ձեռքէս եկածը պիտի ընեմ — պատասխանեց Տէնդհըմ խուսափական կերպով մը։

— Միթէ գիտե՞ս որ ոճիր մը գործելու կ'յանդգնիս — ըսաւ Աարիան ոտք ելլելով։

— Ինչ որ ընեմ, լաւագոյն է քան մարդասպան լինիլը, բայց ժամանակ չունիմ աւելի ևս խօսիլ, արդէն առաջարկս պիտէք և ինչպէս որ կամիք այնպէս ըրէք։

— Ժամանակ պէտք է ինձ այս մասին խորհրդածելու — ըսաւ Աարիան հանդարտութեամբ։ — Կարող ես գնալ և ինձ ժամանակ տալ։

— Բայց խոյս տալու մի մտածէք — պոռաց Տէնդհըմ՝ դէպի դուռը շարժելով — վասն զի կարելի չէ այդ, դուրսը պիտի ըսպասեմ հսկելու համար։

— Ես կարող եմ, հակողութեանդ հակառակ, խոյս տալ։

— Ո՛հ, կարող էք, իրա՞ւ — խնդաց Տէնդհըմ։ — Կ'համարձակիմ ըսելու որ դուք վհուկ մ'էք, այնպէս չէ՞, կարելի է բանալին ծակէն անցնիք, բայց բոլոր մեր կախարդութեամբ այս մտածանքէն չպիտի կրնաք ազատիլ, եթէ մեծակ դուռար մը չվճարէք ինձ — և այս ըսելքը նետելով Տէնդհըմ դուրս ելաւ և իր եռակն դուռը դոցեց։

Երբ Աարիան միս մինակ մնաց ազատու մութ մտքերուն խուռին մէջ՝ սկսաւ վեր վար քալել՝ իր այս կացութեան վրայ խոհալով։ Նա որոշակի նկատեց որ Տէնդհըմի իշխանութեան տակն էր, և եթէ իր առաջարկը մերժէր, անմիջապէս պիտի ձերբակալուէր, դատուէր . . . Տոք. Ռոմրամարի մարմնոյն մէջ . . . Աարիան Լանգատոյրի սպանութեան համար, և որովհետև ծանր էին ապացոյցներն իրեն դէմ, վերջապէս պիտի կախուէր։ Բայց այս վտանգը չէր որ իրեն սարսուռ կ'ազդէր, ո՛չ, այլ աւելի ահռելի բան մը, վասն զի գիտէր որ իր յաւուրկ մարմինն, ի սպառ մեռած լինելուն, ի հարկէ պիտի թաղուէր, և ապա . . . ո՛հ, Տէ՛ր Աստուած, ի՛նչ զարհուրելի՛ քան . . . երբոր իրեն Տոք. Ռոմրամար պիտի կախուէր, իր հոգին պիտի վերադառնար գտնելու իր նախկին մարմինն, և պիտի գանէր . . . ո՛ր . . . ան դագաղին մէջ։ Իր կենդանի մարդ հոգին տակ պիտի պառկէր, և պիտի մեռնէր ան ենէ ահռելի մահուամբ . . . այս է հնգմամբ։

Ա.յսպիսի ահարկու մահուան մը գաղափարը միայն պաղ քրտինքով կ'ողողէր իր ճակատը, և իր թևերն վառարանին եզրին վրայ կոթնելով՝ թախծագին կ'ողբար։ Եւ իրօք՝ երկու սոսկալի մահուամբ պիտի մեռնէր, նախ կախաղանի վրայ իբրև Տօք· Ռովրսմայր, և ապա դերեզմանին մթութեան մէջ՝ իբրև Ա.տրիան Լանգասար։ Ի՞նչ պիտի ընէր ... Տէնդհըլի առաջարկին հաւանիլ և աղատիլ, կամ անձնատուր լինիլ և բոլոր խնդիրը բացատրել։

Ա.իսո՞ս, քանի գիտէր նաև որ եթէ այսպէս վարուէր իրև խելագար պիտի նկատուէր, և եթէ իր կեանքն անգամ անվտանգ մնար, յիմարանոցի մը մէջ պիտի դրուէր։ Ուշ կամ կանուխ Տօք· Ռովրսմայրի մարմնոյն կեանքը պիտի վերջանար, և ապա՝ անտարակոյս՝ իր մարմնոյն գառնալով՝ գերեզմանի մէջ իր մահը պիտի գանէր։

Միւս կողմէ՝ լիովին հասկցած էր Տէնդհըմի մատնտու բնաւորութիւնն, և գուշակած էր որ եթէ անոր խնդրած գումարն իսկ վճարէր, սպասաւորը տրուելիք չէքին գումարը պիտի գըրպանէր և ապա՝ նոր վարձք մը ստանալու համար պիտի երթար դինք ոստիկանութեան մատնելու։ Ա.յսպէս կարծես թէ իրեն համար ազատում չկար ... ամեն կողմէ ծանր վտանգներով չրջապատուած էր և դժբազդ պարագայից անոք խաղալիքն էր դարձած։

Իր գլուխն վեր առաւ և ակնապիշ նայելով այն խորշոմած դէմքն որ իրեն կ'ակնարկէր հայլիին մթութեան մէջ, կ'խորհէր թէ իրև Ա.տրիան Լանգասար մարդասպանութեամբ ամբաստանուած և խոյս տալու համար Միչէլ Ռովրսմայրի անձին մէջ ապաւէն գտնուած էր, իսկ հիմակ իրև Միչէլ Ռովրսմայր կ'ամբաստանուէր մարդասպանութեամբ, և հիմակ ուր պիտի ապաստանէր ... ո՞ւր։

Իրև լոյսոյ կայծ մը մըտքովը ուղեղին մէջ խնդրոյն լուծումն երևցաւ իրեն։ Ա.յն ծեր մարդն՝ որու կերպարանն առած էր՝ ըսած էր իրեն որ եթէ Տօք· Ռովրսմայրի մարմինը դիպուածով կամ ինքնասպանութեամբ մեռնէր, հոգին իսկոյն պիտի դառնար իր յաւուրկ մարմնոյն մէջ։ Լաւ, այդ պիտի ընէր ... ինքզինք պիտի սպաննէր Տօք· Ռովրսմայրի մարմնոյն մէջ և պիտի արթնար՝ իրև նուաղումէ՝ Ա.տրիան Լանգասդրի մարմնոյն մէջ։

Ա.յո՛, այս ծանր վիճակէն աղատելու համար ամենէ դիւրին

միջոցն այս էր։ Անուշ՝ ինքնասպանաթեան դաշտիարն իրեն սարսուռ կ'ազդէր, բայց՝ երկու սոսկալի մահուանէ, կախաղանէ և խեղդուելէ, ազատելու համար՝ միակ միջոցն այս էր, ուստի՝ ազատուժի մէկ հատիկ հնարն էր Տօք. Ռովրսմայրի մարմինը ջնջել։

Արդէն խորհած լինելով որ այսպիսի պատահար մը կրնայ տեղի ունենալ . . . թէև յուսացածէն աւելի չուտ հասած էր այդ պատահարը, Ատրիան իր հետ առած էր մահաբեր թոյն մը պարունակող սրուակ մը, արևելեան հաղուագիւտ խառն մը ծուխը, զոր գտած էր Տօք. Ռովրսմայրի բուժական մի արկղին մէջ։ Նա միշտ իրեն հետ կ'կրէր, և հիմակ, իր գրպանէն հանելով զայն՝ լոյսին տարաւ և լաւ մը քննեց։ Մութ կարմիր հեղուկ մը կ'պարունակէր այդ սրուակն, որու մահատու բուռն յատկութեան տեղեակ էր, վասն դի հնդիկ ֆաքիրին օրագրին մէջ կարդացած էր անոր ամբողջ նկարագրութիւնը։ — Փառք Աստուծոյ — մրմնջեց նա իւրովի՝ սրուակին խիցն հանելով — ահա այս ջուրն պիտի ազատէ զիս։ Ռովրսմայր կ'ըսէր թէ հոգևոր աշխարհին մէջ ինքնասպանութիւնը ծանրապէս կ'պատժուի, բայց չպիտի դառնայ ատով անուշ եթէ իր մարմնոյն կեանքը զրաւէ երկու սոսկալի մահուանէ ազատելու համար։ Ո չ, դառնապէս քաւեցի այս ծերուկ մարմնոյս մէջ Ատրիան Լանգասդրի մեղքը, և զայն պիտի ջնջեմ առանց հետևանքէն վախնալու։ Այս կերպով գոնէ իմ յատուկ մարմինս պիտի առնուի և իմ սիրած կնոջս գրկաց մէջ ինքզինքս պիտի գտնեմ։

Այս պահուս խուցին դուռն կոչտաբար բացուեցաւ. Տէնդհըմ երևցաւ և յաղթական քայլով մը յառաջ անցաւ։

— Լաւ՛ ուրեմն — ըսաւ նա — իր ոսկրուտ ձեռները չփիլով, մինթ ձեր ընելիքը որոշեցի՞ք։

— Այո՛, որոշեցի — պատասխանեց Ատրիան, իր ձեռքին մէջ ամուր բռնելով սրուակը։ — Այո՛, որոշեցի որ քեզ պէս անզգամի մ՛ և ոչ իսկ մէկ բէնի մը տամ։

— Շատ լաւ, հիմակ պիտի ձեռքակալել տամ ձեզ — պոռաց Տէնդհըմ, դիտելով որ ստակ կորզելու առիթը ձեռքէն կ'խուսի։

— Դու չպիտի ձեռքակալել տաս դիս — պատասխանեց իր տէրն տարօրինակ ժպիտով մը — վասն զի քու խորամանկութենէդ ազատ պիտի մնամ։ Գնա՛, ոստիկանները չուտով կ'անչէ, վասն զի միայն մեռած մարմին մը պիտի գտնեն։

Տէնդհըմ անոր դիտաւորութիւնը իմանալով՝ վազեց անոր վրայ զայրագին աղաղակով մը, որպէս զի անոր ձեռքը բռնէ, բայց չուտ մը Ատրիան սրտակը բերանը տարաւ և անոր պատրուակը քաշեց։

Այսպատերն ետ ետ քաշուեցաւ երբ Ատրիան հեղուկը խըմեց, վասն զի ահռելի փոխոխութիւն մը տեսնուեցաւ իր տիրոջ դէմքին վրայ . . . իր նիհար ձեռներն փետտելու չափ քաշեին վայրագաբար իւր ալեւոր մորուան, և սուր ու խեղդուկ աղաղակ մ՚արձակելով գետինն ընկաւ Տոք. Ռովրմայր . . . մահահար։

Եւ ժամացոյցն ինն զարկաւ։

ՏԷՐ ՔՆԱՅԻՒ ՋՐԱՒՈՒԺՈՒԹԻՒՆԸ

Ա. Մ՚ըլ Մարտ 1 ամսաթուով «Տէր Քնայրի բժշկութիւնը» խորագրով մեր հրատարակած մէկ պատահական յօդուածի առթիւ խոստացած էինք նոյեակաւոր ջրաւոյժ քահանային պարմանման եղանակին վրայ առանձին ուսումնասիրութիւն մը հրատարակել։ Այս անգամ կը կատարենք մեր խոստումը։

Նախ բացատրենք բժիշկ – երէցին վարդապետութիւնը հիւանդութեանց առիթ տուող պատճառներուն վրայ կամ մանաւանդ բուն իր խօսքերը արտագրե՛նք հոս։

«Ամէն հէնդրընդ, ինչ որ ալըլլայ անոնց անունը, պէղիճը, ձէթտրը, արմատը, պերմը՝ արեան դէմ կը գործէն, և կամ այն պլոյըրնեան դէմ ըղձ արթնը կը կրէ օդաջրով ու ընտարար փորքերուս ներկայըրնեան հիպոհանդ . . . ։ Բուժման գործը սա՛ կրկնակ վախճանը միայն կրնայ ունենալ. կա՛մ իր բնական ու կանոնաւոր չարժումը տալ արեան շրջարերութեան, կա՛մ մաքրել արիւնը պլան պլայլըղ ու ապականող ամէն յոռի տարրներէն։ Ամէն գործ՝ ու մարմինը վերկազդուրելու խնամքէ զատ բան չկայ ընելիք։

«Գործը, մանաւանդ մեր մեթոտը, ընդհանրապէս բուժելի ամեն հիւանդութիւնները կը բժշկէ, քանզի իր բոլոր կիրարկութիւններն ախտը արմատաքի խլելու կը ձգտին, և կարող են։

Ա. Փաթաթել ամէն տեսակ պատրուակը,

Բ. Փաթաթել պատրուակը դուրս վտակել

Գ. Այս կերպիւ մատուցած պէտք է անդադար չրջաբերուիլն.

Դ. Վերջապէս զգացնել ու կատարել պէտքացեալ կողը։

Տէր Քայբի կարծիքով՝ չրի ամենէ պարզ, ամենէ հեշտ ու ամենէ անվնաս կիրարկութիւնք յառաջ կը բերեն ամենէ ազդու ու հաւատի բուժումները։

Այս սկզբունքներով առաջնորդուած Պաղիկրացի բժիշկքահանան որ առանց բժշկական համալսարանի երես տեսած ըլլալու երկար ու յարատև փորձարկութեանց վրայ միայն հիմնուած է իր բոլոր մեթոդը, չրի հետևեալ կիրարկութիւնները կ'ընէ՝ զորս հրաշալի յաջողութիւններ կը պսակեն ետքը։

1 Կոխանք (compresses), այսինքն ծալ ի ծալ չրաթաթաւ լաթ՝ որ տեղական գոլացուցչի գործ կը կատարէ, 2 ը լոգանք, 3 ը Շոգիք, 4 ը Ջրհեղք (affusiors), 5 ը Լուացանք (lotions) 6 ը Պատատումնք (emmoellottemeuti), այն է մարմինը պատող թաց սաւան՝ վրայէն բրդէ ծածկոյթով։ 7 ը Ըմպանք։

Շոգւոյ բոլոր լոգանք, ամբողջական տաք լոգանք զանազան խառներով՝ կը ծառայեն ախտածին տարրներու ֆոքոֆան, բոլոր պատատումնք, մասամբ իւթք չրհեղք ու կոխանք՝ անոնց փոքհանման, վերջապէս բոլոր ցուրտ լոգանք, բոլոր ջրհեղք, մասամբ իւթք լուացանք՝ նպատակ ունին կազդը զօրացնել։

Ցիշե՛նք հոս բուժիչ այս տարրեր տարբեր միջոցներու տոքթրթաժանումները առանց մանրամասնութեանց ու համապատասխան կիրարկութեանց իմնելու՝ որ խիստ հեռուն սիրտ առնէր գրել։

1 Կոխան+ — Վերին, տորին ու որովայնական կոխաններ։

2 Լոգան+ — Լոգանք ոտից (տաք ու ցուրտ), կէս–լոգանք (մինչև մորին մէջ տեղը, մինչև մակորովայնը, կամ ստէպ աւելի վեր՝ միշտ պաղ ջրով), կէս–մէջքով լոգանք (տաք կամ պաղ), ընդհանուր լոգանք (տաք ու պաղ), մասնակի լոգանք, (թևերու ու ձեռքերու, գլխի, աչաց լոգանք)։

3 Շոգիի լոգան+ (կէս–մէջքով, տաքի, գլխի, ու զանազան մասերու։

4 Ջրհեղ+ (Ամբողջական, վերի, վարի, ծունկերու, կռնկի)։

5 Լուացան+ (Ամբողջական ու մասնակի)։

6 Պատատման+ (Գլխի, վգի, ծունկերու, ոտքերու. «կէս–պատատում, թաց շալիկ, սպանիական վերարկու» կամ ամբողջական պատատում։

7 Ըմպանէ — Բժիշկ–քահանան որ ջրի օգտակարութիւնը ճանչցողներէն է, հետեւեալ պատուէրը կուտայ. « Ամէն անգամ որ ծարաւ եմ՝ խմէ, այլ չափազանցէ՛ մի՛ երթար: « Գանէ մը տարիներ յառաջ, կ՚ըսէ, ջուր խմելու ծայրայեղութիւն մը կար. 8, 12, 16, 20· լիտր խմողներ պակաս չէին: Աւտոր հակառակ կան անձինք՝ որ չարաթ՝ ամիս կ՚անցընեն առանց ջրի կաթիլ մը բերան դնելու: Ինչպէս իրենց խելքն ու դատողութիւնը կը կորսընցնեն մարդիկ՝ երբ կենդանիները անօթենան՝ կ՚ուտեն, երբ ծարաւին՝ կը խմեն, երբ պէտք չեն ղդար ա՛լ՝ կը դադրին ուտելէ ու խմելէ: Այսպէս կ՚ընէ նաև կանոնաւոր մարդ մը՝ ըլլայ հիւանդ կամ առողջ . . . :»

Հիւանդութեանց դարմանման մէջ ւիորձառական բժիշկը՝ (այս բառը լաւ իմաստով կը դործածենք), թէև տաք ջուր կը դործածէ ի հարկին՝ ինչպէս տեսանք, այլ մեծ բարեկամ մ՚է պաղ ջրի: « Ամեն անգամ որ տաքը յատկապէս ապսպրուած չէ, կ՚ըսէ, որեան ըսբը պաղ՝ պնեան և լաւագոյն: Ջուռը ջրի մէջ ձիւն անգամ դնել կը պատուիրէ առողջ անձերուն:

Բնայրեան դրութեամբ՝ ընդհանուր ցուրտ լոգանքէ յառաջ մարմինը պէտք է որ տաքցած ըլլայ կամ վառարանի մօտ նստելով, կա՛մ աշխատանքով կա՛մ մարզանքով: « Եթէ քրտնած ես՝ ու նոյն իսկ արիւն քրտինք մտած՝ մի՛ վախիր բնաւ ցուրտ լոգանքէ . . . միայն թէ հիւանդ եղած չըլլաս: Շատերը՝ նոյն իսկ խորհող մարդիկ քրտնած վիճակի մէջ՝ կը վախեն ցուրտ բաղնիքէ, որ սակայն ամենևին վտանգ մը չունի . . . : Որքան քրտինքն առատ՝ այնքան է լաւագոյն:»

Ընդհանրապէս ընդունուած կարծիքներու և սկզբունքներու հակառակ պատուէր մ՚է այս, այնպէս չէ՞· այլ ահաւասիկ ուրիշ պատուէր մը ա՛լ՝ որու Տէր Բնայրի հիւանդները կը հետեւին առանց վնասի ու օգտի—իսկ՝ թէև պաշտօնական բժշկութիւնը չընդունի զայն ու դատապարտէ իսկ . . . : Որքան նոր ու աւելի արտակեդրոն դարմաններու պիտի հանդիպինք վարը՝ որք առջի բերան իսպառ վտանգաւոր պիտի երևին, այլ սակայն եղած անթիւ անհամար ւիորձերու համեմատ չէ թէ միայն անվտանգ են անոնք, այլ նաև օգտաբեր ու առողջարար . . . :

Որ և է ցուրտ լոգանքէ եաք մարմինը չորցնելու պէտք չկայ, այլ միայն գլուխն ու ձեռքերը (այս վերջիններըս՝ որպէս զի հանդերձները չթրջուին հագնուած ժամանակ:) Զոր չափիկը ու մըննացած լաթերը խնայն հագնելու է մարմնոյն վրայէն՝ որպէս

պի դուրսի օդէն թոլորովին աղատ մնայ այն։ Սրբելը չմեղ ըսել է, և չմելը մարմնոյ ամեն կէտերու վրայ հաւասնման աստիճանաւ չկրնար ըլլալ։ Այս պարագաս մարմնային մակերևոյթին վրայ անհաւասար ջերմութիւն մը յառաջ կը բերէ՝ որմէ հիւանդ ու տկար անձինք պարտին զգուշանալ։ Ջրբուխլը արագօրէն յառաջ կը բերէ բնական, կանոնաւոր ու միօրինակ ջերմութիւն . . . ։

Մարմանք (չմուռ, խոզանակում) նորահրաշ ջրաբոյժին մեքոտին մէջ որ և է մաս չունին։

«Ասոնց առաջին արդիւնքը՝ այսինքն ջերմութիւնը, կ'ըսէ, ես աւելի հաւասար ու միօրինակ կերպով ձեռք կը բերեմ սրբուիլ արդիլելով, իսկ անոր երկրորդ նպատակին՝ այն է ծակոտիկները բանալ ու մարմինը զօրացնել, հասնելու համար կոչտ շապիկ մը կը հագնիմ մարմնոյ վրայէն։ Կոչտ շապիկը այն մեծ առաւելութիւնն ունի որ չէ թէ խոզանակին նման քանի մը րոպէ՝ այլ յարատև աղդեցութիւն մ'ի գործ կը դնէ՝ առանց ձգի ու առանց ժամանակի կորստեան։»

(Շարունակելի)

Մ. ՆՈՒՊԱՐԵԱՆ

ԿՄ ՅՈՒՇԱԳՐԵՐՍ*

ՄԱՆԿԱԿԱՆ ՕՐԵՐ

Ա.Ա

Քանի՛ համրակ ու անճարակ էին հին նաւարկուներն։ Եւ ինչպէ՞ս չլինէին, երբ՝ Զինացիին վաղուց գտած կողմնացոյցէն զուրկ՝ այլ հետաքրքրութեան ու չհոս խմանէն մղուած՝ կը նետուէին վտիտ նաւերով անդունդին, խաւարին, անծանօթին ծոցն, որպէս զի նոր հողեր, նոր ափեր գտնեն և Հերմէսի առևտրական անճուկներուն դոհացում տան։ Հովերու խաղալիկ, ալեաց վրայ տարուբեր, ստէպ թիակներու, երբեմն առագաստներու ուժով կ'քերկին խոպան, ժայռուտ ու ամայի ևպր-

*Տե՛ս Ա. Մ-ռ-ւ, 1897 թիւ 12։

ներ և երկարատև ուղևորութեան մ՚ամեն նեղութեանց ու զրկանաց կ՚տուային։ Իսկ երբ բաց, լայնատարր ծովը չափելու յանդգնէին հին դարերու այդ խուզարկուներն՝ հիւսիսային աստղը գիշերայն, իրենց ուղեցոյց, ցերեկն՝ հովու յորձանքն ունէին, և կ՚սուրային ցրկանաւերու մէջ, ջրային անապատի մը ծոցն՝ մերթ իրենց կէտ նպատակէն տարրեր՝ անծանօթ երկիրներու վրայ տարագիր ու սովալլուկ մնալով, մերթ յաջողութեամբ վերադառնալով՝ նորանոր գանձերով լի, իրենց մեկնակէտը։

Փառք Աստուծոյ, այն հին փիւնիկեան ու եգիպտական նաւարկութեան օրերը չատուենց անցեր էին, և մեր նաւն ապահով ուղեցոյց ունէր, մեր նաւապետն հմտութիւն ունենալ կ՚յաւակնէր, ծովային հրէշներն կ՚անգոնէր և ամեն խոչնդոտ աչքէէ պէս կարել անցնելու կ՚պարծենար։ Սակայն՝ թերևս մեր սև բաղդէն, ծովուն և մեր սրտին անդորրութիւնն երկար չտևեց։ Անակնկալ նորանշան արգելք մը մեր առջև ելաւ, և մեզ բոլորովին չուարեցուց։

Օր մը յանկարծ՝ մեր նաւն երկարամիջ հրուանդանի մ՚առջև կ՚գտնուի և Օմանի ջաթդանը՝ գլուխն աշխարացոյց տախտակի մը վրայ կախած՝ կ՚սկսի խորունկ մտածել անշուշտ թէ ի՞նչպէս պիտի կարենար իր նաւն այդ լեռնէն անցնել։ Կանխ առնուլ կարելի չէր, և ոչ ետ դառնալ, քանի որ հովն եռանէն կ՚մղէր նաւն դէպ յառաջ, և անառարկելի կատր փոթր պիտի լինէր եթէ այդ ժայռը ճեղքելու փորձ մ՚ընէր։ Արդ հատաւելի էր մարդուն կերպարանն. թաւ յօնքին ներքև աչերն կ՚ոլորուէին, կ՚վրիւրար, կ՚հայհոյէր, և մերթ ակնարկը դէպ ի հրուանդանին ծայրն և մերթ քարաւոյին վրայ նետելով, անշուշտ սատանան մատ ունի այս լարուած ծուղակին մէջ կ՚ըսէր, և կ՚պնդէր որ այդ լեռնային պատուարը պէտք չէր որ իր առջևն ելնէր և իր ընթացքը կարելու սպառնար, քանի որ իր ծովային հաշիւներուն նայելով, Հորմոս և Քարրադոս կղզիներուն մէջէն պիտի անցնէր, լայն ու ընդարձակ միջոց մ՚որմէ չէ թէ մի այլ հարիւր նաւ հանդարտ ու հանդիստ կրնային մի և նոյն գծին վրայ անցնիլ։ Եւ նոյն պահուն՝ մեր նաւը միշտ կ՚յառաջանար դէպ ի լեռն, և՝ ըստ երևոյթին՝ նաւապետը՝ հովին յաջող ուղղութենէ հրապուրուած՝ կ՚գանդաղէր անոր յետոյս չրջան մ՚ընել տալու մտաք հրաման արձակել։ Ես և եղբայրս այս չափ ու զարհանալի վիճակէն չատ բան չմանաւոլով՝ նաւապետին

մա կեցած գլխիկոր և պրեմէ ահարեկ՝ կ'դիտէինք որ քիչ քիչ լեռն մեզի կ'մօտենար։ Միւս կողմէ մարդը կ'կոխար, հովը կ'սաստկանար և ալիք աւելի ուժգին կ'մռնչէին։ Եւ նաւը կը սահէր աւելի արագ դէպ ի հրատանգանի դոգն, և նաւապետը խորաչափը կ'նետէին ծովը ու անդադար նաւապետին հրամաններին կ'սպասէին պարաններէ կախուած՝ որպէս զի առագաստակոներուն պակաս եղած չարժուէր տան, երբ յանկարծ ձայն մը լսուեցաւ — խո՜ր, խո՜ր . . . և նաւապետը միշտ աչքը քարտէսին սևեռած՝ կարծես թէ ազդարար ձայնը չլսեց, վասն զի կարկինով կ'չափէր ու կ'չափչփեր ալ և ալ գծեր, բոլորակոներ կ'չինէր, և երեսը կ'ծռմռկէր։ Իսկ ես շատ ուրախ՝ մտովին կ'ըսէի արդեօք այս ցամաքն է իմմիր քաղաքն, որ սակայն մարդկային բնակութեան երես չունէր, քանի որ վայրի կոչտ կոճղերու, այլանդակ ապառաժներու ու փոսերու կոյս մը կ'ներկէր այն, և հետևապէս գազաններու որջ մըն։ Սրտագոչ՝ իմ կասկածս համարձակեցայ յայտնել նաւապետին, որ աչք ըրաւ ինձ մտածելու և հարցուց թէ աշխարհագրութիւն գիտե՞ս, ըսի պիտես, ցոյց տուր ինձ ըսաւ քաջուց կղզին։ Ես որ իմ պզտրցական յարափոփոխ չրջաններուս մէջ՝ հազիւ ատ բառը լսած էի, ես որ էլէնէտայի մէջ քաջալաբժի նիշ առած, Հոմերոսի մի քանի երգերու կատրներէն զոց ըրած էի և Պլուտարգոսի մեծ մարդիկներուն անունները յանարէն գիտէի, ապշած ինացի այդ հարցման վրայ և բացասական պատասխան տուի։ Նաւապետը ծուռ ծուռ նայեցաւ ինձ՝ գլուխն օրօրելով և մտրուքը չոլելով, և թերևս ամօթ ապարա նաւապին ու իմ առջև, և անտարակոյս զայրացած նաւուն ձախող ուղղութեան վրայ, աչքը վեր վերցուց ցամաքը, դիտեց լեռը որ կ'մօտենար միշտ և հրաման տուաւ զեկավարին նաւուն քիմքը պարզել դէպ ի աջ, արևելքի կողմն, պոռալով ատիճի պէս — Ա՛նչուշտ եղբ մը պիտի գտնեմ, որ նաւս ուղիղ ճամբու մէջ դնեմ, ապա թէ ոչ գլուխս լեռին պիտի տամ և նաւուս հետ անդունդը պիտի տուիմ։»

Այս պուժտրեր ու ահարկու ցամաքն ալպական բոլորովին ահարեկեց մեզ, բնաւ չկրնալով ըմբռնել թէ ծանր փոխարկէ մը պրծել եաև՝ թէնչպէս կարելի էր հանկարծապար խաղալ ծովու մը խորն իջնել մի միայն մեր առջև անկուսած լերան մը պատճառաւ, որ, սակայն, նոյն պահուն նաւուն բանած հնչակին

ուղղութեամբն, այն ևս կ'ընդէր և քիչ քիչ կ'հեռանար, այնպէս որ սպառնալից վտանգին տեղի չկար։ Եւ իրաք՝ կարելի է անդէպս նաւապետին՝ նաւն իր նոր շարժումովը իր տակէն հեռահեռ կ'բռնար բաւական լայն նեղուց մ'որուն երկու եզրներն արագ արագ կ'խուսէին, հմայութեամբ մ'ընդարձակ ջուրիզ մը հարթելով։ Այսպիսի խաղեր ունի ծովը, երբ մանաւանդ նաւն՝ կղզիներուս խումբի մը մէջ ընկած՝ կ'սահուրի իր ճամբան դիւզակ կարել, պահ մ'իր առջև անանցանելի լեռնակոյտ մը տեսնելով, և ապա՝ ճարպիկ ղեկավարութեամբ մը ընդելով, յանկարծ լեռ ու ամբարտակ ինքնաստահ տեղի կ'տան և նոր անցքի մը՝ մերթ ծպիաւէտ ու փառաւոր, մերթ նեղուցի մը՝ ղերծուկ ու քարուտ՝ տեսարանը կ'ներկայեն։

Նոյնը պատահած պիտի լինէր և մեր նաւուն՝ երբ իրր պատհեռուն իր առջև տեսաւ լեռներուս կոյտ մ'որ՝ ինչպէս կ'երևի, ֆաքսոս կղզւոյն արևելեան գլուխը պիտի լինէր, և հովին բերմամբ քան նաւապետին դիտութեամբ՝ այդ կողմն շեղած լինելով՝ փոխանակ թերևս Արքուի Պիտերա հրուանդանին կողմն ուղղուելու, անոր հաշիւները տակն ու վրայ ըրած պիտի լինէր։ Եւ սակայն՝ մխիթն այս էր՝ որ ինչպէս ինք վերջէն յայտնեց, ֆարթաֆոսի և Հուդոսի ընդարձակ ատրածութեանն մէջ գըտնուիլ կ'կարծէր, կ'զարմանար բնապէս թէ ինչ պատճառաւ իր նաւուն հանդիպ բարձր հրուանդան մը կ'ցցուէր և իր դնացքը կ'չփոթէր։ Միայն՝ երբ նաւն իր արևելեան ուղղութեամբն արդէն լայն անցքի մը մէջ մտաւ, ծանօթ քարտէզն առաջ խնդալ սկսաւ։ — Ծչուաուական հոգը պէտ խաբեց, նաւս ահա ֆաքսոսի և ֆարթաֆոսի նեղուցին մէջն է և ամեն ինչ յաջող։ Բայց ելմէ հովը մեր դէմ պատնէշ խոչոր շրջան մ'ընելու պիտի պարտաւորիմ ասիկան եզերքն ուղղելու համար։»

Դիւրին է երևակայել թէ որքան ուրախ եղաւ եղբօրս հետ, երբ տեսայ որ վտանգալի ըսուած դիրքէ մ'ազատեցանք և նաւը մի քանի ժամէն բաց ծովը մտնելով՝ չարունակեց իր ճամբան անարգել։ Սակայն մի քանի օր ետք՝ ուրիշ՝ ելմէ աչ աւելի յուզիչ, աւելի դառն և անոանելի նեղութիւն մը պաշարեց մեզ, երբ համբարապետն եկաւ խնդրուց նաւապետին որ ջրամբարի ջուրն հատնելու վրայ է։ Արդէն հասկ, մանրենէ և սալ հիւծեզ ուտեստէ զուրկ՝ մի քանի օրէ ի վեր լոկ մրջած չոթով, չորաբեկ գրաւելով՝ ձիմ ապրուշէ, սոխէ, ձկեմէ չինուած աղցան էր մեր առաւօտեան ու երեկոյեան կերակուրն կարելի

չէ բացատրել թէ ինչ ախորժակով կ'լափէինք այդ ընդեղէն ուտելիքն, որ մեզ քան ամեն համադամ աւելի անուշահամ և գմայլելի կ'թուէր։ Ստամոքսի դատարկութեանն թէ ոչ ծովուն կապզուրիչ օդին վերագրելի էր այդ մեր սուր ախորժակը չգիտեմ, միայն այս իրաւ է թէ ջուրն՝ պոր տակառի մը մէջէն՝ թիթեղեայ աման մը լեցնելով կ'խմէինք՝ ժամանակէ մ'ի վեր, այդ դոյզն հաճոյքն ալ պղտորեց։ Վասն զի ոչ միայն պղտոր էր, այլ և ջրային ճճիներ կ'վխտային տակառին մէջ՝ և՝ մեր բոլոր պգուչութեան հակառակ, սպկպ մանր մուներ որդեր ջրին հետ մեր կոկորդէն վար կ'իջնէին։ Ա՛հա այդ որդալից ջուրէն իսկ՝ թէև արդէն բոլորովին նոզկալի, զրկուելու գոյժն մեծ սոսկում պատճառեց ամենուն, քանի որ ազի ջուրն ըմպելի գործելու հնարը տակաւին անուրջներու կարգն էր։ Նաւապետն՝ որ մեր խռովեղն կերակուրին մասնակից կ'լինէր, և մերմ ընդ մերի բռնուած ձուկերով մեր անջուկ սեղանը կ'հարմնէր, հրամայեց որ ջուրն, որքնօտ ջուրն, խնայութեամբ խմուի, և ինք աւելի կ'ցաւէր որ հովը հետզհետէ կ'նուազէր քան թէ ջուրը։ Ջրային նաւագնութեան ճարը կարելի է գտնել ըսելով մեզ կ'յուսադրէր։ Այդ կն երեք չարաչար աւելի էր որ ծովու վրայ կ'գեգերէր մեր նաւն, և հասաւ օր մ'ուր եղինքց կապոյտը դեղին մշուշով մը գոցուեցաւ, հեզմիչ ջերմութիւն մը մեզ պաշարեց, տաւգասանները թօղլորկն ընկան և նաւը կարծես մխուած մնաց անդունդին վրայ, մինչ ծովուն երեսն արեւուն հրակէզ ճառագայթներէն կ'շողքանար և սպիտակ գոլորշի մը հետզհետէ մեր շուրջը կ'թանձրանար։ Կատաղի տարրն իր անհուն տարածութեան մէջ կ'ննջէր անշարժ, հովի չունչ մը չկար և նաւային հետ ամենքը դրեթէ տոչորուեն, բերանարաց և հեւն ի հեւ հեւուն կ'նայէինք միգապատ հորիզոնը՝ թերևս կենսարեր քամիի մը կարօտ։ Ջո՛ւր, ջո՛ւր տուատ ու մաքուր ջուր ունենայինք։ Սև աղտոտ ջուր մ'էր որ տակառին մէջ տապով ու որդերով կ'եռար, և այն անշուշտ հիւանդութիւններու զգրգռալի անօթ մ'էր։ Ի՞նչպէս կարելի էր մտանել այդ տակառին և ջուր քամել։ Ցետին ծայր խղճալի էր մեր վիճակն։ Մահն որ մեզ երեսներ էր փոթորիկ, խումբ և սովի գէմքով այնքան անգութ երեսոյթ մը չէր ունցած որքան այդ երեսոյթին ապէտն։ Քանի՛ քանի անգամ անիծեցի այն օրն ուր նաւ մտայ և մայրենի ծոցէն հեռացայ։ Փափկասուն մանուկներու համար մի՞թէ կա՞ր չարչարութեան և տառապարութեան դառ

մը աւելի ծանր ու ապէտալի օրքան այս ծովային ուղեւորութեան տանջանքն։ Եւ ի՞նչ էր մեր մեղքն. ինչո՞ւ համար այսպէս տառապէինք. մեմէ հնարը չկա՞ր աւելի դիւրին կարճ ու հանգիստ ուղեւորութիւն մ՚ընել։ Ի՞նչ օգուտ, հարկ էր ըսկսել ցմրուր Հայրական անխոհեմութեան այս պատճառ բաժակին, որ առաջին ու վերջինը չէր, հարկ էր այս նեղութիւնները քաշել յանուն հայրենի լեզուին, որմէ զրեթէ զուրկ մնացեր էինք օտարութեան մէջ, թէեւ աւելի բազպատար պիտի լինէի թերեւս, եթէ այն ժամանակ ծովը դիս կլանէր, նօմութիւն, պապակ բոլոր չտեսնիմ այլեր տաշորէր . . . ։

Նոյն պահուն նաւապետին մտահոգութեան նշաններն զգալի կ՚ին։ Ալն ճակատը կ՚չիփչր, աչերը զայրագին հեռուն կ՚յառէր, անդադար եւ անդրդուելի հովուն բուռներովը կ՚օգտառնար. երբեմն շուրթերը կ՚շարժէր՝ անշուշտ աղօթելու եւ հովուհարիներն օգնութեան կոչելու համար, երբեմն փրփրելով ծանր յիշոցներ կ՚արձակէր եւ նաւապին վրայ իր բարկութեան հուրը կ՚թափէր։ Այսպէս անցան մի օր, երկու օր, մինչդեռ մեր հոգիներն ալ կ՚անցնէին, ծարաւէն մեր բերանը կ՚փրփրէր, մեր կոկորդը կ՚սպրէր, այնչափ որ եղրայրս ուժասպառ՝ յանկարծ գետինն ընկաւ իմ մօտ — Ջո՛ւր, ջո՛ւր, կ՚մարիմ, կ՚մեռնիմ կոր — կոչելով։ Բոլորովին չուտարած մնացի. նաւապետն իսկոյն բարակ լաթէ մը ջուրը զտեց, կաթիլ կաթիլ նաւազած եղրօրս կոկորդէն վար կաթեցուց, երեսները սրսկեց եւ վերջապէս յաջողեցաւ զանի սթափեցնել։ Բարեբաղդաբար երկրորդ օրուան կէս օրէն ետք՝ մեհնալրտին մէջ փոփոխութիւն մը կը նշմարուի։ Մեզ չրջապատող մշուշային դեղնորակ վարագոյրին մի կողմը կ՚պատռի, և նաւապետը ժպտելով կ՚գուշակէ որ հովի հոսանք մը մեզ պիտի դիմաւորէ։ Գուշակութիւնն անհիմն չէր, վասն զի քիչ քիչ կապոյտ գետակի նման պղպջուն շաւիղ մը կ՚բացուի և կենսատու թեթեւ հով մը կ՚սկսի փչել և մեզ շունչ ու ոգի տալ։ Ցնկակայմի ու խելակայմի լաթերը կ՚պարզուին խնդուն և ցնծութեան աղաղակներու մէջ նաւը կ՚գլորի, կ՚շարժի։ Այս շարժումն հետզհետէ կ՚աւելնայ քամիին հետ և մեզ յաջող նաւարկութեան մը յոյսեր նորէն կ՚բերէ։

Սակայն մեզ համար աւետիք կարևորը ջուրն էր։ Մեր մոքերը ցամքեր էին, ինչպէս նաև ոսկորին մնացած ջուրը։ Նաւապետը դիտակ իւ ձեռին չորս դին կ՚դիտէր։ Յանկարծ հրաժան մը կուտայ ղեկավարին, և նաւը բիչ բիչ փոքրիկ կղզեկի

մը, կամ լաւ ևս ասպետին քարակոյտ մը կ'մտաենայ։ Ապա կը հրամայէ որ նաւակ մ'իջեցնեն և այդ կղզեակն երթալով մի քանի տակառ ջուր բերեն։ Իր հրամանը չուտով կ'կատարուի և երեք նաւատի կ'սահին չուանէ մ'անոր մէջ։ Ես ալ անոնց կը հետևիմ։ Ինչ մանկային յանդգնութիւն էր իմս, վերջէն զգացի։ Նաւապետը կ'դժկամակի թոյլ տալ ինձ և եղբայրս կուլայ խնդրելով որ վեր երթանք, բայց ես այնքան կ'աղաչեմ որ ի վերջ կ'հաւանի, և ջուր գտնելու անզուսպ տենչով նաւատիները կարովարար կ'թիավարեն և ցոյց տրուած կղզեակը կ'հասնին։ Անրնակ կ'երևէր այն։ տեղ տեղ ծառեր, ցից ժայռեր ու խոտաւէտ ձորակներ կային։ Նաւակը կ'կապեն քարի մը և թիավարները կ'պատուիրեն ինձ զայն պահպանել և իրենց վերադարձին սպասել։ Ապա կ'չալկեն տակառներն ու կ'հեռանան ջուր փնտռելու համար։ Այն ինչ անտես կ'լինին, որ երկիւղը դիս կ'պաշարէ. կ'զգամ վտանգին մեծութիւնը, կ'ողբամ իմ անխոհեմութեանս վրայ և ուզ կ'ելնեմ դողդոջիւն որ վազեմ նաւատիներուն ետևէն։ Բայց անոնք արդէն անհետ եղեր էին թուփերու և խոշոր քարերու մէջ։ Աւելորդ է երկարօրէն նկարագրել թէ ինչ արհաւիրք համակեց դիս այս ամայութեան մէջ։ Աժեն վայրկեան կ'սպասէի որ վայրի մարդ մը, կենդանի մը ծակէ մը պիտի ելնէ և դիս պիտի պատառէ ուտէ։ Աժեն չուանչ ինձ սարսուռ կ'պղտէր, ամեն ստուեր իրրև ուրուական մը կ'երևէր աչքիս, ամեն չրխունչ իմ սիրտս կ'ցնցէր։ Մթին ճար կա՞ր այս վտանգալի վիճակէն ազատիլ։ Սկսայ լալ ու հեծծել, և վերջապէս յուսահատ նաւակը քաշեցի մէջը մտայ դնել ցամաքի գաղաններէ ազատ մնալու յուսով, և երեսս ծովուն կողմը դարձած կ'դիտէի մեր նաւն որ հեռուն չրջաններ կ'ընէր անտարակոյս մեզ ընդունելու համար։ Հապա եթէ նաւն ալ հեռանար, ինչ պիտի ընէի, Տէր Աստուած։ Հայր, մայր, եղբայր ի սպառ չպիտի տեսնէի՝ կորսուելով այդ անծանօթ աւերուց վրայ։ Ռոպէնսոն մը չէի կարող լինիլ, այլ անճարակ որս մը ցամաքի կամ ծովուց հրէշներու։ Այսպէս սարսափահար խորհելու ատեն՝ աչքս կ'դարձնէի նաև դէպ ի կըղզեակն ընչաստաց սպասելով տեսնելու նաւատիներուն գալուստը։ Արդէն ժամու չափ անցեր էր և մարդկային ստուեր մը չէր երևեր, և երևակայութիւնս ահռելի նկարներով կ'մոլորէր։

Այն ատեն ծանրագոյն կասկածներ առին միտքս։ Արդեօք փախա՞ն մարդիկն, արդեօք չպի՞տի վերադառնան։ Յանկարծ

ակայ լալագին ազազակներ արձակել նաւուն կողմն, այլ ընդունայն, որպէս զի օգնութեան հասնին ինձ: Ասպա մոռացեալ նաւակը քակել և կարողութեանս ներածին չափ թիով նաւուն հետևիլ: Ես արդէն թիակները ձեռք առեր էի, երբ հեռուէն երդի ձայներ լսեցի: Մեր մարդիկ էին, որ մի մի տակառ չալկած դէպ ի ծովափը կ'վազէին: Ուրախութեանս չափը չիարու: Նոր լոյս առաջի ալեաց կ'պռռայի — Հոս եմ, հոս եմ, — իսկոյն նաւաստիներն ինձ ջուր տուին, տեսնելով որ երկիւղէ ու ծարաւէ գրեթէ մարելու վրայ էի և նաւակը մանելով սկսան թիավարել ուժգին: Նոյն պահուն թեթև մը կ'ալէկոծէր ծովը: Նաւը կխոսվին բացած էր իր առագաստները նպաստաւոր հովին դէմ և կզլեակէն բաւական հեռացած էր: Թիավարներն ամեն ճիգ կ'թափեն որ անոր հասնին: Ես կ'վարէի զեկն, որու գործածութեան եղանակը արդէն քիչ շատ սորված էի: Հովը մեր եաևէն կ'փչէր և նաւն իր ընթացքը հետզհետէ երագելով պզալապէս մեզմէ կ'բաժնուէր և բաւական ընդարձակ միջոց մը կ'թողուր իր և մեր մէջ: Թիավարներն ուժգնագին պահ մը դադար կ'առնուն և դրօշակ կ'բանան կարծելով որ անտես կը մնան մեծ նաւուն կողմէ, որ չարունակ կ'սահէր հեռուն մեզ ապահելու անկարող կամ անփոյթ երևելով: Ես ապշած կ'նայէի չորս դիս՝ պահ մը կասկածելով որ մեզ ալիտի թողուն ծովուն վրայ, և կ'աղաչէի նաւաստիներն որ թիավարեն: Սակայն յանկարծ մեծ նաւուն առագաստները կ'պառնան, անոր դուռկը մեր կողմը կ'ուղղուի և չրջան մ'ընելով տաս վայրկենի մէջ մեր նաւակին մօտ կ'գտնուի: Ինչ անպատում ուրախութիւն: Իսկոյն առագաստները կ'ամփոփուին, նաւն ինքնին կանգ կ'առնու, և նախ ջրալի տակառներն մեր կ'քաշեն, ապա ես ու նաւաստինները մեր կ'ելլենք և նաւակն ալ ըստ կարգի կ'կախուի իր տեղն:

— Ափէրիմ, ափէրիմ, ջո՛ւր, ջո՛ւր — կ'պոռան նաւապետ ու նաւաղն, մեր քաջութեան գովեստներ հռսյլելով, թէև Աստուած գիտէր թէ ի՛նչ ոհմտուք ու դողեր ունեցայ մինչև որ նաւը մտայ:

Ս. Ա.

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

ԱԶԴԱՅԻՆ ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆԻ

Ըստ կտակի բարեյիշատակ Յովնէփայ Իզմիրլեանց՝ Դործադիր մասնաժողովս պատիւ ունի հրաւիրել այն հզիւնակներն՝ որք Ազգային Ղպրուեան և Պատմութեան վերաբերեալ ո՛և է աշխատութեամբ կը փափաքին մասնակցիլ Սահակ-Մեսրոպեան Գրական մրցանակաբաշխութեան, հաճին իրենց աշխատասիրութիւնները յուղարկել մինչև յառաջիկայ 1898 տարւոյ Յունուարի վերջ՝ առ Ամենապատիւ Բրգազան Պատրիարքը Հայոց ի Կոստանդնուպոլիս։

Տպագիր երկասիրութիւնք չարչ է որ երեք օրինակ լինին, իսկ ձեռագիրք մէկ օրինակ, որք, ինչպես յայտնի է ետ չեն դարձուիր։

(Կնք.)

ՍԱՆԱՍԱՐԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ

ՇԲՋԱՆ ՃԺ.

ՅԱՅՏԱԳԻՐ 1897–98 ՎԱՐԺԱՐԱՆԱԿԱՆ ՏԱՐՒԱՆ

Վարժարանս ունի երկու բաժին. Ա. Ուսումնական եւ Բ. Արհեստագիտական։

Ա. Ուսումնական բաժինը իւր ծրագիրով կը համապատասխանէ գերմանական միջնակարգ վարժարաններուն, եւ ունի մէկ նախապատրաստարան եւ վեց վարժարանական դասարան՝ իւրաքանչիւրը մէկ տարուան ընթացքով։ — Դասանոց առարկաներն են։

1. Կրօն. — 2. Եկեղեցական պատմութիւն. — 3. Հայերէն. — 4. — Տաճկերէն. — 5. Գաղիերէն. — 6. Գերմաներէն. — 7. Պատմութիւն. — 8. Աշխարհագրութիւն (քաղաքական, բաղդատական, առեւտրական եւ ուսումնական)։ — 9. Բնական գիտութիւն (Բնապատմութիւն, Տարրաբանութիւն եւ Բնաբանութիւն)։ — 10 Բանականութիւն (Թուաբանութիւն, Գրահաշիւ, Երկրաչափութիւն եւ Տամբոկալութիւն)։ — 11. Գծագրութիւն. — 12. Գեղագրութիւն. — 13. Երգ. — 14. Գաշնակ (կամաւոր)։ — 15. Ջուրակ (կամաւոր. — 16. Մարմնամարզ։

Արհեստագիտական բաժինն ունի չորս տարուան ընթացք։ Ուսանելի առարկաներն են Կոշկագործութիւն եւ Կողպարարութիւն՝ իրենց ճիւղերով Հանդերձ։

Վարժարանս ընդունելիք ամէն աշակերտ պարտի ներկայացնել իւր ծննդեան ու մկրտութեան, պատուաստի ու առողջութեան վկայականները, ինչպես և Օսմանիկ բլմիրիային։

Թէ՛ Ուսումնական և թէ Արհեստագիտական բաժնի իւրաքանչիւր դիշերօթիկ աշակերտի համար, պէտք է իբր տարեթոշակ վճարուի 20 Օսմ. ոսկի, որ կը պարունակէ աշակերտին ճնունդի, հագուստի, լուացքի ու մաքրութեան, բժշկի ու դեղի, ուսման ու դասագրքերու և այլ ուսումնական պիտոյքներու ծախքերը։

Թէ՛ Ուսումնական և թէ Արհեստագիտական բաժնի իւրաքանչիւր ցերեկեայ աշակերտի համար, պէտք է իբր տարեթոշակ վճարուի 6 Օսմ. ոսկի, որ կը պարունակէ միմիայն ուսման և ցերեկուան ճաշի ծախքերը։

Նորեկ դիշերօթիկ աշակերտները՝ վարժարանական ամրողջ շրջանին համար՝ իրր մուծք պարտին վճարել միանուագ 3 Օսմ. ոսկի։

Ուսումնական բաժնի այն աշակերտները՝ որոնք ուզեն ուսանիլ կամաւոր առարկաներէն (Դաշնակ, Ջութակ, օրական մէկ ժամ արհեստ) ո՛ր և է մէկը, պարտին աստր համար վճարել տարեկան 3 Օսմ. ոսկի, որ կը պարունակէ միմիայն ուսման, գործիներու, դասագրքերու և արհեստական նիւթերու ծախքերը։

Իւրաքանչիւր նորեկ դիշերօթիկ աշակերտի համար, պէտք է վարժարանիս արկղին յանձնուի միանուագ 3 Օսմ. ոսկւոյ պահեստի գումար մը, իրր աշակերտին ճանապարհածախք՝ երբ ընթացուստրտ լինի և կամ եթէ ո՛ր և է պատճառաւ Հարկ դառնայ վարժարանէս արձակել զինքը։ Պահեստի գումարին ամրողջը կամ մնացորդը նա կը տրուի՝ երբ աշակերտը մեկնի վարժարանէս։

Ոչ — կարնեբնակ ծնողք կամ խնամակալք պարտաւոր են անպատճառ քաղաքիս մէջ ցոյց տալ պատշաւաւոր անձ մը՝ իրր իրենց փոխանորդ, որուն կարելի լինի ի հարկին յանձնել աշակերտը։

Եթէ տարուան ընթացքին մէջ աշակերտը ո՛ր և է պատճառաւ, արձակուի կամ բացակայ լինի վարժարանէս, նոյն տարուան թոշակէն կամ միւս տուրքերէն բան մը չի ղեղչուիր։

Ամառնային արձակուրդի միջոցին, ծնողք կամ խնամակալք կրնան՝ եթէ կամին՝ տուն տանիլ իրենց զաւակները կամ սանները, պայմանաւ որ երթևեկութեան ծախքն ու ամէն հոգ և պատասխանատուութիւնն պատկանին իրենց կամ իրենց փոխանորդներուն։

Նորեկ աշակերտներու մուտքի քննութիւնները կը սկսին յառաջիկայ Օգոստ. 25ին, իսկ վերամուտի դասերը՝ Սեպտ. 1ին։

Աշակերտ տալ փափաքող ծնողք կամ խնամակալք պարտին կանխաւ բանակցիլ վարժարանիս Տնօրէնութեան հետ։

ՏԵՍՈՒՉՈՒԹԻՒՆ ՍԱՆԱՍԱՐԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ

Տեսուչ՝ Տեսչութեան հասցէն է

ՏԵՍՈՒՉՈՒԹԻՒՆ ՍԱՆԱՍԱՐՅԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻՆ

ԿԱՐԻՆ

Directin du Collège Sanassarian

21 Յունվ. 1897 ERZEROUM

, ԽՄԲԱԳԻՐ-ՏՆՕՐԷՆ Մ. ՄԱՄՈՒՐԵԱՆ

ԱՋԴ

Կը խնդրուի Ա. ՄԱՄԼՈՑ Գաւառական Պատ. Բաժանորդներեն որ բարեհաճին իրենց բաժնեգինն ժուրալ դրկել Խմբագրութեանս: Ի դիւրութիւն բաժանորդաց Խմբագրութիւնս կ'ընդունի Օսմ. թղթադրոշմ 20 հատը մէկ մեճիտի հաշուով, կամ փոխ-գիր տեղւոյս կամ Կ. Պոլսոյ վրայ:

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՔ

Դրատուն ստացած է

ՋՄԻՒՈՆԱԿԱՆ ՆԱՄԱԿԱՆԻ — Մելքիսեդեկ Եպսկ. Մուրատեան — Տպագր. Ղևոնդ ք՛հ՛. Փափազեան Կալաց, 1896 — Գին 5 դրուշ:

ԽՈՐՀՐԴԱՏՈՒ — Առակաց սեռի յատուկ — Հեղինակ, Բրօֆ Ֆ. Ալպրէխթ, Թարգմ. Մ. Կ. Նալբիկեան — Տպագր. Յ. Մատթէոսեան — 1897 — Գին 3 դրուշ:

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏԱՐԵՑՈՑՑ — 1897 — Հրատարակիչ Նշան Կ. Պէրպէրեան — Կ. Պոլիս. գին 5 դրուշ

Հրատարակուած է Մամուրեան գրատան գրացուցակն և փափաքողաց ձրի կ'ուղարկուի:

Ընդունք որ կ'փափաքին իրենց երկերն թերթիս մէջ ծանուցուած տեսնել, պարտին ներեցան օրինակ խմբագրութեանս հասցնել:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Ա. ՄԱՄՈՒԼԵԱՆ

Թղմիրի համար	տարեկան	3 1/2	ոսկ. ֆռնկ.
» »	վեցամսեայ	2	» »
Ազգ. վարժապետներու	»	2 1/2	» »
Ն. Գոյտոյ եւ Փորր Ազիոյ	»	4	» »
» » »		2 1/2	» »
Ազգ. վարժապետներու	»	3	» »
Ռուսաստանի համար	»	8	րուպլի ինդիրքամ.
» » »		4	» »
Եւրոպայի »	»	17	ֆրանկ
» » »		9	»

ԿԱՆԽԻԿ ՎՃԱՐԵԼԻ

ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԲ

ԱՊՕԼԻՍ —	Մեծ. Տիգրան էֆ. Ճիվելեկեան Խմբագրապետ Ճէրէտէ Շ-ւէնէյ Գադը Ալի ճառախի թիւ 20
» —	Մեծ. Նշան էֆ. Պէզճեանեան Էմին Ջադեսի, ճառախի թիւ 61
» —	Մեծ. Սմբատ Գաբրիէլեան Գազաակէր խան թիւ 46 Պահճէ Գափու
ՄԱԳՆԻՍԱ —	Մեծ. Մկրտիչ էֆ. Իրմաճեան
ԷՕՏԻՄԻՉ —	Մեծ. Տիրան էֆ. Պէճոկլեան
ՍԱՄՍՈՆ —	Մեծ. Նթռանիկ էֆ. Մուրատեան
ԵՐԻԶԱ —	Մեծ. Յարգիս էֆ. Ամատեան
ԵՐՈՒՍԱԼԷՄ —	Գեր. Տ. Ղեոնդ եպսկ. Խոսրովեան
ԳԱՀԻՐԷ —	Մեծ. Դաթեպեան էֆ. Դաւուտպէեան
ՄԱՆՉՈՒՔԸ —	Մեծ. Տիգրան վ արպեան
ՌՈՒՍՉՈՒՔ —	Մեծ. Գառնիկ էֆ. Տէօմէնեան
ՊՕՍՓՕՐ —	Մեծ. Տիրան էֆ. Թաշճեան
ԳԱՒՐԷԺ —	Մեծ. Տօհ. Փաշաեան

Հասցէ

Մ. Մամուրեան

խմբ. Տնօրէն Ա. Մ–ի ի ՋՄԻՒՐՆԻՒ

M. Mamourian

Rédacteur de la Revue

« Arévélian Mamoul » SMYRNE

de la Revue Arménienne HANTESS